

95 № 1453

ՄԱՆԿԱՎԱՐՁԻ ԳՐԱԴԱՐԱՆ

գ. ԵԴԻԼՅԱՆ

ԶԵՐԱԳՐԻ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՆՍՏԻՏՈՒ
ՏՈՒԹԱԿԱՆ
Բանական
Համարակալ
ՀՀ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1927

372-5

5-16

1928 N 203

0120-16

Սահման
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ


372.5

5 - 16

գ. Եղիշև

ԶԵՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՄԵԹՈԴՆԵՐԸ.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ПОЗИКОВЫДЕНИЯ
Владимир Наук
СССР



I. ԳՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մարդկային ամեն մի գիտակից շարժում տեղի յե ունենում կատարեղի մեջ արթնացած այս կամ այն կարիքին բավարարություն տալու համար։ Գրելը շարժողական մի գործողաւթյուն ե, վորի նպատակն ե դրող անհատի ներքին գիտակցական վիճակներն արտահայտել այնպես, վոր կարդացողը հասկանա գրողի մտադրություններն ու ցանկությունները։ Այսպիսով, ուրեմն, զիրը, խոսելու կարողության պես, հարաբերության մի միջոց ե, այն տարրերությամբ, վոր խոռոշությունները ժամանակ հարաբերության միջոցը ձայնն ե, իսկ գրելիս՝ գծագրական ձևը՝ տառը։

Լեզվի ամին մի հնչյունի համար գործ ե ածվում պայմանական մի նշան, մի տառ. մի բառ զրելու համար նախ վորոշվում ե, թե այդ բառը ինչ հնչյուններից ե կազմված, և ինչ հաջորդականության մեջ են այդ հնչյունները, վորից հետո գրվում են այդ հնչյունների տառերը նույն հաջորդականությամբ։

Հարաբերության այս ձերին տեղյակ մարդն ոտարության մեջ յեղողին նամակ ե գրում, լսածները գրեանց կացնում, գրքերից կարեար կտորներն արտագրում, իր մաքերն ու զգացութերը հոգվածներով կամ զրական այլ տեսակի յերկերով ուրիշներին մատչելի գար-



59503.66

№ 521

Գրառհայվար № 115 (ր)

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում

Տիրամ 1500

ձշնում, ստանձնում այնպիսի պաշտոն, վորն անպայշան գրագիտության պահանջ ունի և այլն:

Պակաս կարեռ նշանակություն չունի գրելու հմտությունը դպրոցական կյանքում. աշակերտն իր մտքերն ու հույզերն արտահայտում ե շարադրության միջոցով, գրի յե անցկացնում ուսուցչի առածներից կարեռ մասերը, արտագրում ուսուցչի տված կոնտեկտները կամ կարգացած գրերի կարեռ կտորները, նագրություններ ու զեկուցումներ ե գրում, արձա-

Գրավոր աշխատանքը կրթում ե նաև աշակերտի դիտակցական-ներքին կյանքը. աշակերտը վարժում է կամավոր, կենտրոնացած և ուշադիր աշխատանքի, մշակվում ե նրա համեմատող ու ընտրող դիտությունը, նրբանում ե ձեերի և նրանց փոխհարաբերությունների ըմբռնողությունը, սեր և առաջանում դեպի կանոնավորությունն ու սաքրությունը, և կըրթե, սակայն, վոր դպրոցում աշակերտին գրել են սովորեցնում վոչ թե գլխավորապես նրա հոգեկան կյանքի վրա ազգելու, այլ նախ և առաջ նրան հարաբերության մի միջոց սովորեցնելու համար:

Ինչպես ասվեց, ձեռագիրը հարաբերության միջոց ե, վորն իսկական մտքով այդ դերը կիսաղասի տառեր, վորոնք ընդունելի յեն նույն ցեղին պատուի այնպիսին բոլոր գրագետ քաղաքացիների կողմից, տարբյամբ, առանց ժամանակ կորցնելու կարգ, տառերն,

այնպես գեղեցիկ գրի, վոր նայողը հաճույքը ստանա, այնպես սահուն ու արագ գրի, վոր զբելու վրա յերկար ժամանակ և ավելորդ եներգիա չծախսի:

Իրական կյանքում, սակայն, այլ բան ենք տեսնում. աղջատված, իրար մեջ խառնված, անհամաչափ մեծության, վոչ միորինակ ուղղության, ծուռումուտառերից ե բաղկացած մեր դպրոցականի ձեռագիրը, վորը կարգացվում ե ամենամեծ դժվարությամբ, կամ իսկի չի յել կարգացվում և ամենատհաճ տպագրություն ե թողնում նայողի վրա: Նույնն են ցույց տալիս նաև խմբագրությունների ստացած թղթակցությունները, պաշտոնական հաստատությունները մտնող և այնտեղից դուրս յեկող գրությունները:

Վատ ձեռագիրը կարգալիս ընթերցողն ահազին ժամանակ ե կորցնում, հոգնեցնում միտքն ու ուղեղը, ջղայնանում, գրվածի իմաստը հաճախ սխալ հասկանում, կամ չի հասկանում. ընթերցողն այսպիսով անց ցանկալի ձեռվ ժամանակ ու եներգիա յե ծախսում:

Սոցիալական այս չարիքի գեմ աշխատել ե կովել անցյալի դպրոցը, զբա դեմ կովում ե նաև նոր դպրոցը. սակայն նոր դպրոցն այս ուղղությամբ գես չի հասել ցանկալի հետեանքի, վորովհետեւ ուսուցիչները լուրջ չեն վերաբերվում դեպի աշխատանքի այս յեղանակը և կամ չեն դործագրում աշխատանքի այնպիսի մեթոդներ, վորոնք վրական հետեանքներ տային:

Ուսուցիչը պետք ե ներկայի գիտական տվյալների վրա հիմնված մեթոդական ձիշտ և գործնական տեսակետներ ունենա ձեռագիր սովորեցնելու հարցի մասին, իսկ նա ձիշտ տեսակետների կհանգի այն դեպում միայն, յեթե նախ և առաջ գաղափար կադմի

այն մասին, թե գրելու բարդ գործողությունը հոգե-
ֆիզիկական ինչ տարրերից և կազմված:

II. ԳՐԵԼՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

1. Գրելու գործողությունը հոգեբնախոսական մի
բարդ յերկույթ և կազմված հետեւյալ պարզ մասերից.
ա) Գրելու համար անհրաժեշտ են ախտ և առաջ
կամքի իմաստը՝ կամքի մոլումն. Գրել կամքնալու պատ-
ճառով գրողի ուշադրությունը կենտրոնանում և այն
շարժումների և գիտակցության այն աշխատանքի վրա,
վորի միջոցով միայն հնարավոր և դառնում գրելը.
պետք ե գրիչը վորոշ ձեռվ բոնել գրելիքի իմաստը
հասկանալ, բառի արտասանությունը և գրավոր պատ-
կելը հիշել, ձեռքերը վորոշ կերպ շարժել և ալին, իսկ
այս գործողությունները կարտահայտվեն միմիայն այն
ժամանակ, յերբ գրողը գրելու ցանկությունը ունենա,
այդ ցանկությունը մի հրող, մողող ուժ և դառնում
գրելու գործողության համար, վորից հետո արգեն գոր-
ծը սկսում և սահուն առաջ գնալ, վոչ միայն գրել
սկսելիս, այլ և շարունակական գրելու ժամանակ և
կամքի իմպուլսներ են հարկավոր, մանավանդ դժվա-
այդ մղումները միշտ ել նկատելի և գորեղ կերպով

բ) Գրելու ժամանակ դեռ և խաղում նաև գրելիք
բառի կամ նախադասության իմաստի մտապատճերը.
բնչ բառեր պիտի գործ ածի, իսկ յեթի արտագրում
և կամ թերթրածը գրում, հասկանում և ուրիշի ա-

սածների կամ զլատձների իմաստը և նետո յի միայն
գրում:

գ) Գրելու ժամանակ գրողը ներքնապես, լուր-
կերպով արտասանում ե բառը և ապա գրում. յեթե
բառերը բազմավանկ են և դժվար արտասանելի, գրո-
ղը վանկ-վանկ, նույնիսկ հնչյուն-հնչյուն և արտա-
սանում այդ բառերը և գրում. Այս յերկույթը ցույց
է տալիս, վոր գրելիս դեռ և խաղում բառերի հիմքան—
արտասանության համար անլրածեաւ օարժումների նի-
ողությունը:

դ) Գրողը պետք ե ճիշտ պատկերացնի բառերի
հնչյուններին համապատասխանող տառերի ձեվերը—
պատկերները. յեթե մոռացել ե տառերի պատկերները,
չի կարող գրել, յեթե նույնիսկ գրելու ցանկություն
ունենա, լավ պատկերացնի գրելիքի իմաստը և լավ
հիշել բառի կամ բառերի արտասանությունը. Տառերի
հիշողությունը գրության հիմնական նախապայմանն ե:

ե) Գրողը պետք ե իմանա, հիշել այն օարժումները,
վորոնց ոգնությամբ գծվում են տառերը: Կան մար-
դիկ, վորոնք կարդալ գիտեն, բայց վոչ գրել. նշա-
նակում ե, նրանք տառերի հետ կապում են համա-
պատասխան հնչյունների արտասանությունը, բայց
ծանոթ չեն դեռ ձեռքի ու մատերի այն շարժումնե-
ներին, վորոնց շնորհիվ գրվում են տառերն ու բառերը:

զ) Յեթե վերև հիշված բոլոր պայմանները կան,
այն գեղքում կարելի յե գրել սակայն գրողը գրելու
ժամանակ ստանում ե տեսողական տպափորիչունեներ
իր գրած բառերից ու գրչի ձեռքի շարժումներից, ինչ-
պես և օարժման ներքին զգայություններ ե ապրում
մատերի ու ձեռքի կատարած աշխատանքի շնորհիվ:

2. Զպեսք և յենթողրեւ վոր գրության սրբության այս մասի այս ժամանելու ըուն գրության ժամանակ զատկատ, իրարից անկախ են արտահայտվում. վարձ գրության ժամանակ կամքի մղումը, գրելիքի իմաստի մտապատկերը, բառի արտասանության, տառերի պատկերների ու գրության համար անհրաժեշտ շարժումների հիշողությունը իրար հետ նիացած են արտահայտվում: Վարժ գրողը կամքի մի ակտով գրում են մի ամբողջ բառ, նույնիսկ բառեր, տառերը համարյա թե կորցնում են իրենց անկախ նշանակությունը, վորովհետեւ վարժ գրողը չի մտածում բառի ամեն մի տառի գրության մասին և լարում կատարում ամեն մի տառի համար, այլ միաձուլված մի արագ պրոցես և կատարում բառը գրելու համար:

Սակայն զրողը բառի ամեն մի տառի համար կամքի մի վճիռ և կայացնում, բառի ամեն մի տառ նույն ուշադրությամբ և ձեռքի նույն ձնշման զրելությամբ և նույն արագությամբ և գրում. սկսնակի համար տառերի պատկերների հիշողությունը, արտապատկերացումն իրարից անկախ, ջոկ յերկությունը են, վորովհետեւ հաճախ տառերի պատկերները հիշում են, բայց չի կարողանում գրել դրում են, բայց չի կարուցում իր գրածը կարգալ, կարդում են իր գրածը, բայց իմաստը չի հասկանում:

Կարեոր և այստեղ հիշատակել, վոր սկսնակ գրողի համար ամենագդզվար աշխատանքը շարժումների միջոցով տառեր զծելն են: Մի բառ գրելիս սկսնակն այնքան և լարվում, ուշադրությունն այնպես և կենացրոնացնում գրության շարժումների վրա, վոր մոռա-

նում և և բառի իմաստը, և արտասանությունը, այդպատճառով ել գրելուց հետո հաճ սի չի կարողանում եր գրածը կարդալ:

Ինչպես մարմնամարզական մի բարդ շարժում մարդ առվարում են նախ մաս-մաս և հետո միացնում և բազմաթիվ կրկնությունների միջոցով մեքենայական—ավտոմատ դարձնում, այնպես ել գրության բարդ պրոցեսն ամբողջական ավտոմատ և դառնում բազմաթիվ վարժություններից հետո միայն:

3. Գրության վերև հիշված մասնակի գործողություններն իրենից գրելիս, արտագրելիս և թելագրությամբ գրելիս տարբեր խմբավորումներ են տալիս,—

ա) Երենից գրելիս (շարադրելիս) գրելու ցանկությունը միանում ե գրելիքի բովանդակության (իմաստի) գիտակցությանը, սա յել իր հերթին բառերի հնչյունական հիշողության—արտասանությանը, հաջորդում ե տառերի պատկերների և տառերը գրելու համար ձեռքի շարժումների հիշողությունը և, ապա տեղի յե ունենում բուն գրությունը: Այստեղ գործողության յելակետը բառերի իմաստն ե:

բ) Արտագրելիս գործողության յելակետն և կազմում տեսողական պատկերը, վորն արթնացնում ե հնչման և իմաստի մտապատկերներ և ապա գրության շարժումները:

գ) Թելադրությամբ գրելիս գործողության յելակետն և կազմում լաված հնչյունախումբը (բառը), վորին միանում են իմաստի պատկերացումը, լուս արտասանությունը, գրելի պատկերի և հարկավոր շարժումների հիշողությունը և ապա փաստական գրությունը:

Այս յերեք ձեերից մեկ ձեռվ գրելուն վարժված անհատը չի կարող նույն հմտությամբ գրել նաև մյուս ձեերով. ամեն մի ձեի համար պետք ե առանձնապես վարժվել:

4. Ամեն մի մարդ իր առանձնահատուկ—անհատական ձեռագիրն ունի, բայց յեթե բազմաթիվ մարդոց անհատական ձեռագիրները համեմատելու լինենք իրար հետ, կնկատենք, վոր զանազան խումբ մարդիկ համեմատաբար իրար նման են գրում. այդ նմանություններն ինկատի ունենալով՝ գրողներին կարելի յեմիքանի իրարից տարբերվող բաժանել:

ա) Նայած թէ գրության որինակին ինչքան են նմանվում, գրողները բաժանվում են ընդուիթնակող յեվ անհատական տիպերի, Ընդորինակող տիպն աշխատում ե հավատարիմ մնալ իրեն ցույց տրված գրության որինակին, չնչին անհատական գծեր ե մտցնում գրության մեջ: Անհատական տիպը ձևափոխում ե արված որինակը, ինքնուրույնություն ե մտցնում գրության ձեի մեջ՝ ձևափոխելով տառերի վորոշ մասերը: Հենց ուսման առաջին տարում նկատվում են այս տիպերը:

բ) Գրության ժամանակ գրողը ձեռքի մի վորոշ ձնշում ե գործադրում, առանց վորի անկարելի յե գրել. զանազան անհատներ տարբեր ձեռվ են ձնշումներ կատարում: Ճնշման յեղանակն ինկատի ունենալով գրողները բաժանվում են տղամարդու յեվ կանացի տիպերի:

Տղամարդու տիպը գրում ե համեմատաբար դանդաղ, ուժեղ ձնշումներով և տառերն ընդհանրապես միացած. ճնշման ընթացքը սիթմական ե, վոմանք ձնշում են ամենից զորեղ բառի սկզբին, ուրիշները՝

մեջտեղը և կամ վերջում: Բառի գրության ամենազորեղ ճնշման տեղից յետ և առաջ յեղած ձնշումը թուլացած ե լինում. այս տիպի գրողը վորքան շատ ե գրում, այնքան սաստկացնում ե ձնշումը:

Կանացի տիպը գրում ե համեմատաբար արագ, թեթև և թույլ ձնշումներով, տառերը զատկատ և վորքան շատ ե գրում, այնքան թուլանում ե ձնշումը:

գ) Իրարից տարբերվում են նաև արագ յեվ դանդաղ գրողները:

5. Նույն տիպի մարդիկ վորքան ել իրար նման գրեն, բայց և այնպես նույն տիպին պատկանող ամեն մարդ իր անհատական ձեռագիրն ունի, վորովհետև ամեն մի մարդ իր բնախոսական առանձնահատկությունները եվ ժառանգական տվյալներն ունի: Մարդու ձեռքի կայուցվածքը՝ մատերի յերկայնքը, հաստությունը, ձեռքի մատերի մկանների ու հողերի առանձնահատկությունները, վարժվածությունը և այլն—նշանակություն ունեն ձեռագրի լինդրում, բայց ավելի մեծ նշանակություն ունի գլխի ուղեղի այն կենտրոնը, վորը զեկավարում ե գրելու աշխատանքը: Այս խնդիրը պարզվել ե հետեւյալ փորձերով. Նույն մարդուն գրել են տալիս գրիչը բերանով, ձախ ձեռքով կամ վոտքի մատերով բռնած, այդ բռնը դեպքերում ել աչքի յե ընկնում շարժումների ու գծերի այն յուրատեսակությունը, վորը հատուկ ե աջ ձեռքով գրելուն: Այս փաստից յեղակացվում ե, վոր ձեռագրի յուրատեսակության խընդունակությունը գլխավոր գերակատարը ձեռքի շարժումները դեպքարող ուղեղային կենտրոնն եւ:

Ձեռագրի ուսուցան վերաբերմամբ գալիք մանկավարժական-մեթոդական պահանջները յեղակացվելու յեն հոգեբանական վերոհիշյալ տվյալներից:

III. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

1. Նախքան հոգեբնախոսական տվյալներից յեղակացված մեթոդական ընդունելի պահանջներին անցնելը պետք է տանք այն մեթոդների համառոտ նկարագիրը, զարոնք ներկայի համար թեև հնացած էն, բայց պարզ կերպով ցույց են տալիս, թե զպրոցական պրակտիկան մեթոդական ինչ աստիճանների վրայից անցնելով են հասել ներկա վիճակին:

ա) Մեխանիկ մեթոդ: Այս մեթոդը տարածված եր միջնադարյան վանական դպրոցներում. աշակերտը մեքենայորեն ընդորինակում եր ուսուցչի գրած կամ ցույց տված որինակը. աշակերտը սովորում եր գրել բոլոր տառերն այն կարգով, ինչ կարգով հաջորդում եյին նույն լեզվի այբուբենի մեջ, այնուհետև միայն գրում եյին վանկեր և ապա բառեր:

բ) Ստիգմոգրաֆիկ մեթոդ: Ուսուցիչը մատիտով գրում եր տառը կամ կետերով նշանակում տառի կմախքը, իսկ աշակերտն այդ գրածի կամ նշանակված կետերի վրայից գծագրում եր նույն տառը. Այս կերպ ուսուցիչը վոչ միայն շատ ժամանակ եր կորցնում, այլ և աշակերտին զբանական մեթոդում ինքնուրույնությունից և աղատ ու արագ գրելուն վարժվելու հնարավորությունից:

Այս յերկու մեթոդների գործածությունը վազուց ե դուրս հանված դպրոցներից:

գ) Գծային մեթոդ: Այս մեթոդին հետեւող ուսուցիչն աշակերտին հենց սկզբից մի տողանի կամ անտող տեսար չի տալիս, այլ բազմատողանի տեսոր, տեսորի այդ առղերը ցույց էն տալիս, թե կարձ և վե-

րին ու ներքին յերկար տառերը ինչ յերկարությամբ են զբվելու: Բազմատողանի տեսորերն ընդհանրապես ունենում են նաև վերից վալ անցնող թեք գծեր, վորոնք նպաստում են տառերի թեքության համաչափության պահպանմանը. Այսպիսի տեսորը, ձիշտ ե, դյուրացնում ե սկսնակի աշխատանքը, սակայն աշակերտին զրկում ե ինքնուրույն աշխաչափից և աշխատանքից, և յերբ այդ նույն աշակերտն ապագայում մի տողանի տեսորի յե անցնում, միծ դժվարությունների մեջ ե ընկնում և փչացնում իր ձեռագիրը: Փորձերը ցույց են տվել, վոր սկսնակը կարող է ամենայն հաջողությամբ զրել մի տողանի տեսորի վրա, այդ պատճառով ել մի տողանի տեսորն ավելի ու ավելի յե գործածության մեջ մտնում: Գերմանիայի զանազան դպրոցներում զեռ մինչեւ այժմս ել զործ են ածվում բազմատող տեսորեր, իսկ Անգլիայի Միացյալ Նահանգներում ձգտում են մի տողանի տեսորը փոխարինել անտողով, նույնիսկ ուսման առաջին տարում:

դ) Տակտով գրելու մեթոդ: Այս մեթոդը դպրոցներում գործածության և մտնում 19. րդ դարու սկզբանից: Ուսուցիչը նախ բացատրում ե, թե գրելիք տառը քանի տակտային մասից ե բաղկացած, գրատախտակի վրա իրազնորեն ցույց է տալիս այդ մասերը, վորից հետո աշակերտներից մեկը գրատախտակի վրա գրում ե նույն տառը ուսուցչի թելադրած տակտով՝ մեկ, յերկու և այլն: Այս ուղղության ներկայացուցիչները հանձնարարում են սկզբում, տակտով թելադրելիս, տալ նաև տառի բաղկացուցիչ գծիկների անունները և հետո միայն ասել՝ մեկ, յերկու, և այլն. որ՝ պետք ե գրեն „ս” տառը. ուսուցիչը թելադրում ե

այսպիս. յերկզլսանի կարթ մինչև տողը մէկ, հույն լրաքառաթյունից ուղիղ զիծ մինչև տողը կարթով՝ յերկու: Վորոշ վարժություններից հետո միայն կարելի յէ չտալ գծիկների անուններ, այլ ասել միայն՝ մէկ, յերկու, յերեք և այլն: Տակտն սկզբում դանդաղ ե տրվում և հետո միայն, յերբ աշակերտները բավականաչափ վարժվել են, արագացվում են:

Վորոշելու համար, թե ամեն մի տառ քանի տակտով ե զրվում, ուշագրության պիտի առնել այն հանգամանքը, թե այդ տառը գրելիս զըշածայրը քանի անդամ ե սղմումի յենթարկվում: Մեր հայկական ձեռագիր հետևյալ տառերը հետևյալ քանակի տակտով են գրվում:—

Մեկ տակտով — յ. ւ. շ.

Եերկու տակտով — ս. գ. ը. կ. ի. դ. մ. և այլն
Եերեք տակտով — ա. գ. խ. ն. ս. դ. և այլն
Չորս տակտով — ու.

Տակտով գրել սովորեցնելու մեթոդի կողմանկիցները պնդում են, վոր տակտով զրելիս ա) արագ և գըրվում, բ) աշխույժ և կենդանություն և մտնում պարապմոնքի մէջ, գ) կենտրոնանում և աշակերտների ուշագրությունը գեպի գրության աշխատանքը, դ) դասավանդումն ընդհանուր ե դառնում, և ցանկալի դիցիպլինա յի մտնում դասարանի մեջ:

Տակտով գրելու կողմանկից են ուսւ հին մանկակարժներից Գիրքաշը, նորերից՝ Աֆանասյելը, գերմանական մանկավարժների համարյա մեծ մասը, նույնիսկ եքսպերտներաւ մանկավարժության հիմնադիրներից մեկը՝ պրոֆ. Ե. Մոյմանը:

Տակտով գրել սովորեցնելու մեթոդի հակառա-

կորդները պնդում են, վոր ա) տակտով գրելը մի անդուր հարկադրանք ե աշակերտի համար, վորովհետեւ նա զրկվում ե ինքնուրույն և անկախ ոխով աշխատանք կատարելու հնարավորությունից, բ) հոգնում ե ուսուցիչը միորինակ թելադրելուց և ձանձրանում աշակերտն այդ միորինակ զրգիներից, գ) այդ մեթոդն աշխատանքի միորինակ ձեռ և միատեսակ տեմպ ե մըտցընում, այնինչ աշակերտներն աշխատելու ձեր և տեմպի խնդրում զգալի կերպով տարրերվում են իրարից, դ) հենց այդ պատճառով ել աշակերտները գրելիս տակտից յետու առաջ են ընկնում և փչացնում իրենց գիրք: Այս առարկությունները համոզեցուցիչ են. իմ պրակտիկ աշխատանքներն ինձ բերել են այն համոզման, վոր, առանց տակտով գրել սովորեցնելու մեթոդի ոգնության դիմերու, կարելի յէ ավելի դյուրին և հետաքրքիր միջոցներով աշակերտներին լավ գրել սովորեցնել:

հ) Գիենետիկ մեթոդի կողմանկիցները տառերը չեն սովորեցնում այբուբենի միջ ընդունված կարգով, այլ սովորեցնում են նախ հեշտ գրվողները և հետո դժվարները, ամեն մի նոր տառ նախկին տառերի ելեմենտներից ե կազմված՝ ավելացված մի նոր մասնիկ:

Այս տեսակետն ընդհանրապես ընդունելի յէ և ինկատի պես և ունենալ գրել սովորեցնելու աշխատանքների ժամանակ, սակայն անհնար ե զեկավարվել միմիայն գրաֆիկ՝ գծագրական այս տեսակետով, վորովհետև այբունարան կազմովը, բնականորին, ավելի մեծ ուշագրություն ե գրաճնում այն հանգամանքի վրա՝ վոր աշակերտները նախ սովորեն այն տառերը, վորոնց հնչյունները հեշտ են արտասանվում և հնչյունական կապակցություններ տալիս: Իոկ այս ծրագիրն իրա-

գործելու ժամանակ հնարավոր ե, ինչպես և պրակտիկան ե ցուց տալիս, վոր առաջին հերթին այնպիսի հնչուններ անցվեն, վորոնց տառերն ավելի դժվարությամբ են զրվում, քան ապագայում յեկող այլ տառերը: Այբբենարան կազմողը, սակայն, պետք ե աշխատի գործնականի մեջ, հնարավորության սահմաններում, ոգտվել տառերն իրար յետեր դասավորելու խնդրում և հնչունարանական, և գենետիկ տեսակետներից:

Այս պատմական համառոտ ակնարկից հետո անցնում ենք այն տեսակետներին նկարագրին, վորոնք ընդունելի յեն ներկայի համար:

2. Աշակերտին գրել-կարգալ սովորեցնելու մտադրություն ունեցող ուսուցիչը, սովորեցնելուց առաջ, պարզ պատկերացում պետք ե ունենա այն մասին, թե լավ ձեռագիրը ինչ հատկանիելեր ունի, և հետո միայն պիտի պարզի, թե ինչ միջոցներ՝ կան գրության այդ լավ յեղ սնակին հասնելու համար: Աճեն մի լավ ձեռագիր գրված պետք ե լինի պարզ, սահուն և գեղեցիկ:


ա) Պարզ ե գրությունն այն գեղագում, յերբ պահպան են տառերի հիմնական ձևերը, չկան ավելորդ ու պակաս գծիկներ, հիմնական ու մազական գծիկները ցանկալի հաստությամբ են գրված, բառերի տառերն իրար մեջ չեն խառնված, այլ իրարից ցանկալի հեռա-

բ) Դեղեցիկ ե գրությունն այն գեղագում, յերբ տառերի հաստության և մեծության մեջ կա համաշխատություն և սիորինակություն, յերբ չեն խախտված տառերի գեղեցկության հիմքը կազմող հիմնական գծերը, յերբ բառերի տառերը և բառերն ել իրարից վորոշ հեռագործության վրա յեն գրված: Դեղեցիկ գրության հիմքն է կազմում պարզ գրությունը:

4) Զեռագիրը կլինի պարզ և միևնույն ժամանակ գեղեցիկ, յեթե կիրառվեն հետեւյալ պահանջները. բառերի տառերը յերկարության տեսակետից այնպիսի հարաբերության մեջ են լինելու, վոր հաճելի տպագործություն թողնեն. կարձ տառերը (ա. ս. ու. ո. ո.) նստած են լինելու տողի վրա, նույն բարձրությունն են ունենալու, զրանց հիմնական գծերի իրարից ունեցած հեռագործությունը հավասար ե լինելու նույն գծերի բարձրության: Այս տառերի բարձրությունը Ա. և Բ. խմբակներում պետք ե հավասար լինի 3 տար., իսկ ավելի բարձր խմբակներում՝ 2,5 կամ 2 տար.: Վերին յերկար (և. մ. ժ. և այլն) և ներքին յերկար (լ. ը. տ. ց. և այլն) տառերը զրվելու յեն կարձ տառերի բարձրությունից յերեք անգամ յերկար, իսկ լիակատար յերկար տառերը (կ. ի. ք. լ. և այլն)՝ հինգ անգամ: Կան առաջարկողներ՝ վերին և ներքին յերկար տառերը գրել յերկուս և կես, իսկ լիակատար յերկարները՝ չորս անգամ յերկար կարձ տառերի բարձրության համեմատությամբ:

Հիմնական գծերը մազական գծերից շատ ավելի հաստ պետք ե գրվեն, վորպեսզի տառի կերպարանքի հիմքը կազմող այդ գծերն ավելի պայման յերեան և ձեռագրի ընթերցանությունը հեշտացնեն: Մազական գծերը չեն բնորոշում տառը, այլ նպաստում են բառի բոլոր տառերի կից գրության: Ցերկար տառերի ներբեկի մասը սովորաբար մի փոքր հաստ ե գրվում:

Բառերի տառերն իրարից հավասար հեռագործությամբ են գրվելու. մի տառի մյուս տառից հեռագործությունը հավասար պետք ե լինի հիմնական գծի մեջ և կես հաստություն, սապարին յերկու խմբակներում



ել ավելի հեռու պետք ե գրվեն, Գրված բառերն իրարից վոչ շատ հեռու պետք ե լինեն, և վոչ ել շատ մոտ, վորովհետեւ յերկու դեպքում ել դժվարանում ե ընթերցանության գործը:

Տառերի ձևը, մեծությունը, հաստությունը, իրարից ունեցած հեռավորությունը, հիմնական գծերի թեքվածքը (ուղիղ և թեք գրության) գրության ժամանակ միշտ ել նույնն են մն սլու, հակառակ դեպքում ձեռագիրը կդառնա անորոշ ու տգեղ:

Տօղերն իրարից այնքան հեռու պետք ել լինեն, վոր իրար հարեսն տողերի վրա գրված յերկար տառերն իրար չխառնվեն, տողերի ծոսությունը ևս (անտող տեսրի վրա գրելիս) խանդարում ե ձեռագրի պարզության և տհաճ ապավորություն և թողնում:

Գեղեցիկ ու պարզ ձեռագիրը չի կարող անմահուր գրվել. մատով կատարվող ջնջումները, ձեռքով տեսր կեղտոտելը, թանաք թափելը և այլն,—միանդամյն պետք ե վերանան դպրոցից, վորովհետեւ դրանով տուժում ե ձեռագիրը:

Դ) Լավ ձեռագրի մյուս կարեսը հատկանիշն և սահունուրյունը—արագությունը. յեթե մեկը գրում և պարզ, բայց բառերի տառերը հատ-հատ, դանդաղ և անվարժ, նշանակում ենա դեռ լավ գրող չե, վորովհետեւ իսկական մաքով լավ գրողը պետք ե գրելիս քիչ ժամանակ և եներգիա ծախսի. Այդպիս անտեսաբար կդրի մեկն այն ժամանակի, յերբ ձեռքի արագ և անընդհատ շարժման միջոցով մի ամբողջ բառ դրի բոլոր տառերն իրար կցված. Սակայն այսպիս արագ գրելուց հետո անդամ ձեռագիրը պետք ելինի պարզ և գեղեցիկ: Աղաքագրության մասին հետո ագելի մանրամասն խոսք կլինի:

Ե) Զեռագրի այս յերեք հիմնական հասականից ները միասին չեն զարգանում նույն ուժեղությամբ. նախ հեշտ և զարգանում պարզ, հետո՝ սահուն ու արագ և ապա միայն գեղեցիկ գրության տեսակը: Սրանից չպետք ել յեղբակացնել, թե ուսման Ա. տարրում ուշագրություն չպետք ել գարձնել ձեռագրի այս տարբեր կողմերի վրա. ընդհակառակն, հենց սկզբից պետք ել աշակերտին զաղափար տալ պարզ, սահուն և գեղեցիկ գրության մասին, սակայն գիտակցելով, վոր այդ հատկություններից պարզ գրությունն առաջ ե զարգանում, արագը՝ հետո, իսկ գեղագրությունը՝ վերջը:

3. Զեռագրի սովորեցնող ուսուցչի համար պարզ պետք ելինի, վոր սկսնակից այն պահանջները չեն արված, ինչ վարձ գրողից: Սկսնակն աստիճանաբար, տարիների ընթացքում ե վարժ գրող դառնում: Զպետք ե զարմանալ, վոր նա բառի ամեն մի տառի, նույնիսկ տառի ամեն մի հիմնական մասի համար, կամքի և ուշագրության տարբեր լարումներ ե կատարում, շատ դանդաղ և գրում և հաճախ ել իր գրածը չի կարողանում կարգալ: Սկսնակը գրել-կարդալու պրոցեսսի տարբերը միանգամբից իրար հետ չի սիացնում, այլ բաժան-բաժան և գիտակցում և ապա ամբողջական բարդ պրոցեսսը միանգամբից կատարում. ուր՝ նախ նայում ե, կարգում, միտքը հասկանում և հետո գրում. գրում և ամեն մի տառի վրա ուշագրություն դարձնելով, գրելուց հետո հաճախ չի հիշում իր գրածի իմաստը, կամ գժվար ե կարգում իր գրածը և այլն:

Յեթե այս տվյալներն ուսուցիչը հաշվի առնելու վիճի, այն դեպքում իր մեթոդական աշխատանքների ժամանակ կառաջնորդվի հետեւյալ տեսակետներով.

ա) Սեսողիր ուսուցանելու սկզբնական աշխատանքի ժամանակ ժամանակակիր և շատապողականություն ցուցաբերել, վորովհետեւ աշխատանքի դանդաղ տեմպն ավելի հարմար եւ գալիս սկսնակին:

բ) Սկսնակը վարժ գրողի գրույան ձեզը օպետէ և մեժենայութեն ընդգրինակի: Վարժ գրողը կամքի մի վճռի և միասնական մի անընդհատ շարժման միջոցով գրում եւ ամբողջ բառը միանգամից: Այս տվյալից յելնելով՝ մանկավարժներից վոմանք առաջարկում են Ա. Խմբակում սկսնակին հենց սկզբից զրել տալ ամբողջական բառեր՝ և նախադասություններ, առանց նախորոք գաղափար, տալու տառերի ու նրանց ելիմենտների մասին:

Այս առաջարկն ընդունելի յէ, գորովհետեւ սկսնակի ձեռքը դեռ վարժված չէ, և բարդություններ միանգամից զրելը դժվար ենրա համար, ամբողջությունները միանգամից զրելիս շատ սիմաներ են անում զրի տեխնիկական և ուղղագրության պահանջների տեսակետից, տառերի մասին գաղափար չունենալու պատճառով չի կարողանում ինքը նկատել իր թերությունները և ուղղել:

Հիշյալ ձեռվ գուցե հնարավոր լինի պարապել այսպիսի սկսնակների հետ, վորոնք տարիներ շարունակ այցելել են մանկավարտեղ, ուր կրթվել են նրանց դիտողական կարողությունը և շարժունակությունը, բայց ինկատի ունենալով մեր կյանքի հանգամանքները, մենք ևս ուռւս մանկավարժներից շատերի պես (Աֆանասյե և աբրենարան կազմողների մեծ մասը) գալիս ենք այն յեզրակացության, վոր մեր իրականության համար ավելի հանձնարարելի յի այն մեթոդը, վորն


աշակերտին սկզբից նախապատրաննում է զրոթյան համար՝ տալով գաղափար տառերի մասին:

գ) Սկսնակի հետ գործ ունեցող ուսուցիչը պիտի համոզված լինի, զոր ինքն աշխատանքն ինչպես սկսեց յեվ առաջ տարավ, այնպես ել առաջ ե զեալու ապագայում, վրաբիշտու առաջին տպավորություններն ու աշխատանքի ձեռքը կրկնությունների միջոցով խոր, դժվար ջնջելի հետքեր են թողնում մանկան թարմ հիշողության մեջ. հենց այդ պատճառով ել ասվում ե՝ գործողության սկիզբը կանխորոշում ե ապագան. արմատացած բացասական կողմն ուղղելն ավելն դժվար ե, քան նույն անձին ավելի բարդ աշխատանքի վարժեցնելը: Մեր զպրոցների բարձր խմբակների աշակերտների ձեռագրի վատությունը բացատրվում ե առաջին խմբակում գործադրված վատ մեթոդներով կամ ուսուցչի անուշադիր վերաբերմունքով:

4. Գրելն սկսնակ աշակերտի համար կարգալուց վոչ պակաս դժվար մի աշխատանք ե. զրելը մի բարդ շարժման գործողություն ե, վորն առաջանում ե մկանային տարրեր խմբերի փոխազգեցությունից. զրելու շարժման առաջացմանը մասնակցում են մեջքից սկսած մինչև մատի ծայրերի վրա յեղող մոտ 50 մկաններ. մատերի բոլոր տեսակի շարժումների համար գոյություն ունեն հատուկ մկաններ ու հոդեր:

Մանկան այդ մկաններն ու հոդերը դեռ զարգացած չեն և ընդունակ չեն նուրբ ու մանրիկ, սահուն ու համաչափ շարժումներ կատարելու, իսկ զրելու աշխատանքը կազմված ե առանձնապես նուրբ և մանրիկ շարժումներից, հենց այդ պատճառով ել այն մանկա-

վարժը, վորը դպրոց մանող աշակերտին անմիջապես դրել ե սովորեցնում, առանց այլ տեսակի աշխատանք ներով նախապատրաստելու նրան այդպիսի մի բարդ աշխատանքի համար, քար ե ձգում մանկան ձեռքի բնական զարգացման ընթացքի առաջ և հետո սկզբից նրան գրության վատ յեղանակին վարժեցնում: Աշակերտի անդարձացած, չբացված ձեռքը նախ և առաջ պետք ե նախապատրաստել գրության աշխատանիք համար ավելի պարզ և հետաքրքիր զբաղմունքներով:




ա) Դրելու կարելի յէ նախապատրաստել նախ և առաջ նկարչությամբ. նկարելու գրությունից ավելի

դյուրին աշխատանք ե, վորովինետև նկարելու ժամանակ ձեռքը կատարում ե ավելի մեծ և ազատ շարժությանը, նկարչական ձևերն ավելի զարդարվի, հետաքրքր ական են, քան տառերի պատկերները:

Աշակերտը պետք ե աղատ, անկաշկանդ նկարի այն, ինչ իրեն հետաքրքրում ե, ինչ ինքն ուզում ե. աղատ նկարչական այդ զբաղմունքների ժամանակ ուսուցչի ցուցմունքներով պետք ե նկարի նաև այնպիսի առարկաներ, նկարչական այնպիսի ձևեր, վորոնց հիմնական գծերը նման են տառերի բաղկացուցիչ գծերին. նկարելով այդ առարկաները՝ աշակերտն անգիտակցորեն նկարում ե տառերի հիմնական ելեմենտները և այդ կերպ նախապատրաստվում զրության համար: ՀՀ-ը եջի նկարը կպարզի, թե մոտափորապես ինչ տեսակ առարկաներ ե նկարելու աշակերտը. այս որինակը պարտադիր չի ուսուցչի համար. նա կարող ե ուրիշ, բայց նույն հատկանիշներն ունեցող առարկաներից ոգտվել: Այս նկարներից յեղակացվում են տառերի ելեմենտները:

բ) Սկզբնական նկարչական այս վարժությունների ժամանակ աշակերտին նկարել պետք ե տալ այնպիսի գծագրական ձեվեր—նախօեր, վորոնց նկարելով բացվում, վարժվում ե նրա ձեռքը և նախապատրաստվում կից գյության յեղանակը (բառի տառերը կցված գրել): Մտորե արվում ե որինակը (հջ 24):

Այս ձևերն սկզբում պետք ե մեծ նկարվեն, այնուհետև կարող են փոքրացվել. այդ աշխատանքը կատարելիս պետք ե շարժվեն աշակերտի մատերը միայն: Ցանկալի յէ նկարել անտող տեսրի վրա. մի տողանի տեսրի վրա նկարելիս կարելի յէ նկարել



գծերի վրա, նկամ յերկու գծերի միջին ամբողջ տարածության վրա:

Վորպեսզի գծագրական այս ձևերի նկարելը հետաքրքրի աշակերտին, պետք է այդ ձևերը վորոնել և գտնել ամանների, զարդարանքների, շենքերի և այլ առարկանների վրա և այնտեղից ընդորինակել տալ. կարելի յե առարկաներ նկարել, վորոնց մեջ կրկնվում են այդ ձևերը:

Այս նախշերի կրկնակի վարժությունը կձանձրացնի աշակերտին, զրա առտջն առնելու համար պետք է ուրիշ առարկաններ նկարել տալ, որևէ սեղան, ամաններ և այլն, և այդ առարկանների նկարները զարդարել այդ նախշերով. կարելի յե նկարների շրջանակները դրանցով պատկերազարդել, ձեռարվեստային իրերը դրանցով գծագրել և այլն:

Գծագրական այս աշխատանքները պետք է կատարել վոչ միայն մատիտով, այլ և գրչածայրով—բանանով. Գրչով տարվող հեղտ նկարչական աշխատանքները մեծապես նպաստում են բուն գրության աշխատանքին:

գ) Գրության աշխատանքը նախապատրաստվում է նաև ձեռարվեստային զբաղմութեներով: Յերբ աշակերտը կավից շինում է գնդակ, գլան, ոձ, քառակուսի և այս ու այլ ձևերից կազմված զանազան առարկաններ, յերբ նա ձեռում է, կարում, կտրում, կպցնում, շոշափում և այլն, զարգանում է նրա ձեռքի զանազան տեսակի շարժումներ կատարելու կարողությունը:

Վորպեսզի աշակերտի մատի ծայրերը վարժվեն նույրը շարժումների, պետք է նրան այնպիսի աշխատանքներ կատարել տալ, վորոնք գլուխ են գալիս՝ մա-

ար ծայրի շարժումների ոգնությամբ, որ՝ պետք է շինել տալ կեռաս, կեռասի կոթ, մկան ականջներ, թըռչունի վոտի մատեր, ճանկեր, կտուց և այլն:

Դ) Գրելու աշխատանքը նախապատրաստվում է նաև զանազան տեսակի օարժումներով ու մարզանենվ, վազել, ցատկել, մազլցել, բարձրանալ, փորել, հանել, բարձրացնել, տանել, զանազան խաղեր խաղալ, զանազան աշխատանքներ և մարզանք կատարել, — նշանակում ե մեծացնել աշակերտի շարժունակությունը, ճկունությունը և այդ կերպ անուղղակի նախապատրաստել գրության աշխատանքը:

Ե) Այս բազմատեսակ շարժումներից զատ, բայց նրանց զուգահեռ, պետք ե աշակերտին ծեռիքի, բարի յեկ մատերի զանազան մարզանենեց կատարել տալ, գրության գործը նախապատրաստելու համար: Պետք ե ձեռքերը ծալել, բանալ, կողդ տարածել, վեր բարձրացնել, վոլորել գեպի աջ ու ձախ, թափանարել մի բան, ձեռքի թաթի շարժումներ կատարել, մատերը ծալել բուռնցք շինել և բանալ, մատերն ուժեղ ներս ծալել և բանալ, բութ ուտը խորը ծալել և բանալ, մատի ծայրերով մանր ու նուրբ առարկաներ վերցնել և բարձրացնել (ասեղ, ցորենի հատիկներ և այլն), ձեռքի ու մատի շարժումներով ողում զանազան գծեր գծել, զանազան առարկաներ պատկերացնել, մատերը զանազան առարկաների յերեսից շփելով շարժել և այլն:

Այս շարժումները հետաքրքիր զարձնելու համար պետք ե հարմար գեպքերում դպրոցական առողջա աշխատանքների հետ կապել, բայց կարելի յենաև այդ շարժումները կատարել տալ իբրև մըցախաղ, պարզելու համար, թե ով ամենից հաջող և արագ կկատարի այդ շարժումները:

Ղ) Նկարչության, գծագրման, ձեռարվեստալին և շարժումների այս վարժությունները չպետք ն անկախանան դպրոցական ծրագրած աշխատանքներից, այլ պետք ե սերտորեն կապվեն բուն աշխատանելների հետ նույնիսկ ձուլվեն նրանց մեջ, յեզրակացվեն նրանցից, վորովհետեւ այդ գեպքում միայն այդ վարժությունները կդառնան հետաքրքրական աշակերտի մեջ: Այդ պատճառով ել այդ աշխատանքներին չպետք ե հատուկ յերկար ժամեր նվիրել, չպետք ե իրար յետևից հաճախ կրկնել, չպետք ե նրանցից առանձին սիստեմ ստելծել: յեթե վորոշ սիստեմատիկ ընթացքի պահանջ ել դրվելու լինի, միենույն ե, պետք ե այդ սիստեմատիկ ընթացքն ըստ հնարավորության կապվի առորյա աշխատանքների հետ: պարզ ե, վոր առորյա ամբողջական աշխատանքները կատարելու ժամանակ այս վարժություններին կարճատե հատուկ ժամանակ կնվիրվի:

Նախապատրաստական այս աշխատանքների շնորհիվ աշակերտանում ծանոթանում են տառերի ելեսենտներին, նրանց ձեռքերն ու մատերը վարժվում են նուրբ և մանր շարժումների, աչքերի դիտողական ուժը մեծանում ե: Սրանից հետո արդեն հեշտ և գրելու բուն աշխատանքին անցնելը:

5. Գրության գործողության վերլուծությունը ցույց տվեց, վոր գրության ժամանակ գոյություն ունի կամքի վորոշում և ուշադրության լարումն. այդ լարումն, անկասկած, հոգնեցնում ե աշակերտին. վորպեսզի նա կենտրոնանա և ավելորդ ուժեր չծախսի, պետք ե հանույք զգա գրելուց յեկ վագեվորվի այդ աշխատանենօվ: Աշակերտն այդպես կզգա, յեթե դիտակցի դրեթիքի սերկա կամ գալիք ոդուար, յեթե նոր գրը

վող իր աշխատանքի մեջ անցյալի համեմատությամբ
առաջադիմություն նկատի, յեթե գրելիք նյութը հաս-
կանալի և հետաքրքրական լինի: Ուսուցիչն ել իր հեր-
թին պետք ե լավ տրամադրություն ունենա, քաջակե-
րական մի խոսքով, դեմքի ուրախ արտահայտությամբ,
վոգերիչ բացականչությամբ գրգոհ աշակերտին դեպի
գործ: Հոգնած, ձնշված ու անտրամադիր աշակերտը
չի կարող լավ գրել:

6. Գրության ժամանակ գրողը պետք ե հասկա-
նա զրելիքի իմաստը—միտք, պետք ե պարզ պատկե-
րացնի ամեն մի բառի նշանակությունը: Յեթե նյութը
նոր ե կամ դժվար, պետք ե նախորոք բացատրել, հաս-
կանալի դարձնել և հետո գրել տալ. աշակերտը յերբ-
և չհասկացած բան չպետք ե գրի, չհասկացած որի-
նակը մեքենայորեն ընդորինակի: Իրականությունը
ցույց ե տալիս, վոր հասկացած նյութերն աշակերտ-
ներն ավելի լավ ձեռագրով են գրում, քան չհասկա-
ցածները:

Զեռագրի լավությանը նպաստում ե նամանա-
վանդ նյութի հետաքրքրականությունն ու հարազա-
տությունը: Գրելիք նյութեր ընտրելու և ընտրածները
մշակելու խնդրում աշակերտների մասնակցությանը
մեծ տեղ պետք ե տալ վորովհետև իրենց ընտրած և
մշակած նյութերն աշակերտները գրում են ավելի գե-
ղեցիկ և սահուն:

Այս տվյալներից գուցե վորմանք յեղակացնելու
լինեն, վոր սկսնակներին ջոկ տառեր չպետք ե գրել
տալ, վորովհետև տառերն անմիտ, անբովանդակ և ան-
հետաքրքրիր գծագրական նշաններ են: Այս կարծիքն
ընդունելի չի մը վրոշ վերապահությամբ: յեղվի սկզ

գործածվող բոլոր տառերը ջոկ զրել տալու և վարժեցնե-
լու մեթոդը ընդունելի չե: միևնույն տառն իրար յետե-
վից բազմաթիվ անգամ գրել տալն անընդունելի յե:
զրել տառը առանց այդ տառին մի հետաքրքրիր բովան-
դակությունն ու արժեք տալու, նույնպես ընդունելի չե:

Բայց և այնպես, այս կարծիքին ենք, վոր այ-
բուբենի ուսուցման սկզբնական աշխատանքի ժամա-
նակ կարելի լե տառի մասին զաղափար տալ յեվ տա-
ռը ջոկ գրել տալ, վորովհետև այդ աշխատանքն սկսնա-
կի համար ավելի հեշտ ե ու մատչելի, ձեռագիրը հենց
սկզբից կայուն և համաչափ տեսք ե ընդունում, տա-
ռի պատկերն աշակերտի համար չափանիշ ե դառնում
քննադատելու իր գրածը և հասկանալու իր թերու-
թյունները:

Մնում ե մի կարևոր հարց: Ինչպես անել, վոր
տառի գրությունն աշակերտի համար դառնա բովան-
դականից և հետաքրքրական: Այդ նպատակին հասնե-
լու համար՝ ա) նոր տառի պատկերի վերլուծության
աշխատանքին մեծապես պիտի մասնակցի աշակերտը:

բ) Աշակերտին գիտակցելի պետք ե դարձնել, վոր
այդ նոր տառի ոգնությամբ ե նա հնարավորություն ու-
նեցել կարդալու դասագրքի վերջին նոր ու հետաքրքիր
հոգվածը: Կարելի յի հիշեցնել այն բառերը, վորոնց
մեջ կար այդ տառը:

գ) Տառը պետք ե աշակերտը գրի մի տողից վոչ
ավելի, բացառիկ դեպքերում յերկու տող:

դ) Տառը գրելուց հետո անմիջապես պետք ե գրել
տալ բառեր ու նախադասություններ: Առաջին յերկու
տառը գրել սովորելուց հետո պետք ե գրել մտալի նյութ՝
բառ, իսկ միքանի տառից հետո՝ նախադասություն
կամ նախադասություններ:

Ե) Այլբենարանի առաջին 6—10 տառն այս կերպ սովորեցնելուց հետո ել կարիք չկա այնուհետև տեսրում տառերը ջոկ գրել տալու. հաջորդ նոր տառերը պետք ե գրատախտակի վրա վերլուծության յենթարկել, իսկ աշակերտին տեսրում գրել տալ միմիայն մտալի նյութեր՝ նախադասություններ և փոքրիկ պատմություններ, վորոնց բառերի մեջ գործ ե ածված սովորելիք նոր տառը:

զ) Ազգի տառերը ջոկ ուսուցանելիս այնպիսի միջոցի պետք ե դիմել, վոր այդ տառերի գրությունը շահեկան և հետաքրքրական դառնա: Այդ միջոցը, մեր կարծիքով, հետևյալն ե. ամեն մի տառ մի հնչյունի նշանն ե, վորպեսզի տառի գրությունը հետաքրքրական դառնա, պետք ե տառի հնչյունի շուրջը մի հետաքրքրական պատմություն հորինել, վորի մեջ այդ հնչյունը կրկնվում ե միքանի անգամ. որ՝ ս, տառը քնած ե. ա, ինչ սիրուն նկար ե. ու, ինչ ցուրտ ե այսոր, և այլն: Այս նախադասությունների շուրջը հորինած մանկական պատմություններից մեկը լսելուց և պատմելուց հետո աշակերտը գրում ե իր տետրում միքանի անգամ «ս» տառը. դա միտիայն «ս» տառի նկարչական կողմն արտահայտելու աշխատանք չի, այլ աշակերտը գրում ե ս հնչյունը, վորը «ս», տառը քնած ե» նախադասության հիմնական մասնիկն ե, վորով հետեւ, յերբ արտասանում ենք ս, հասկացվում ե լսողի կողմից այն մտքով, վոր պետք ե լսել, վոր ս ասողն իսկապես ասում ե «սուսկաց»: Այս կերպ տառերն ստանում են բովանդակություն, դառնում են հետաքրքրական և համարյա թի ամրողական մի միտք են արտահայտում. տառն այս կերպ դադարում ե լոկ

գծաղրական մի ձե, մի վոչինչ չասող հնչյունի նշան մենելուց:

Այս բոլորից հետո անգամ պիտի առել, վոր ուսման առաջին տարում այլուրեն ուսուցանելիս գրության աշխատանքների ժամանակ տառը յերկրորդական ու յերրորդական դեր է խաղալու, առաջնակարգ նշանակություն և ստանում հենց սկզբից վոչ թի տառը կամ բառը, այլ նախադասությունը և մտալի պատմությունը:

7. Գրության ժամանակ մեծ դեր են խաղում տեսաղական տղավորությունները. գրելուց առաջ տառերի պատկերը պետք ե տեսնել կամ հշել և հետո գրել. գրելուց հետո յել գրողը տեսնում ե իր գրածի պատկերը:

Գրելու համար տրված վատ ձեռագիր որինակը կամ աշակերտների անուշադիր դիտողությունը պատճառ են դառնում, վոր նրանք իրենց տետրերում վատ գրեն: Բայց զրանով չի սպառվում խնդիր: այդ նույն աշակերտները տեսնում են իրենց վատ գրածները, վորն ավելի յե տպագնորդում նրանց հիշողության մեջ: Այս վտանգի առաջը կարելի յե առնել ուշադրության առնելով հետեյալը. աշակերտը միշտ ել պետք ե տեսնի գրության լավ որինակ թի գրքերում, թի գրատախտակի վրա, և թի տետրերում: Տեսնելը դեռ բավական չի, պետք ե որինակը լավ գիտի և տառերի կամ բառի պատկերը պարզ ու վորոշ ըմբռնի: Այդ նպատակին հասնելու համար ուսուցիչն աշակերտների ոգնությամբ պետք ե գերլուծի որինակի արտաքին պատկերը գրության ձեխ տեսակետից, նման ձեռվ աշակերտներին գրատախտակի վրա գրել տա, այդ գրածը գասարանի քննությանը յենթարկի, ապա նոր, լավ որինակ գրի, նորից ուշագիր գիտել տա և հետո թույլ տա տետրում գրել:

այսինքն՝ ամեն միջոցի պիտի դիմի, վորովհավի աշաւկերտն որինակը լավ գիտի ու հետո զրի:

Աշակերտները հենց սկզբից պետք եւ վարժվեն գրատախտակի վրա գրված որինակի բառերը կամ շատ փոքրիկ նախադասությունները գրել միանգամից և վոչ տառ-տառ կամ վանկ-վանկ: Որինակի գրության ձեր բացատրելուց հետո, որինակ, պետք եւ ծածկել և կամ ջնջել և ապա գրել տալ աշակերտներին, հենց այդ պատճառով ել ուսման Ա. և Բ. տարիների ընթացքում գրեից չպետք եւ արտազընել տալ: Այսպես գրեն առանձնապես նպատում եւ ուղղագրություն սովորելուն:

8. Գրելու խնդրում հիմնական դեր եխաղում ձեռքի շարժում: յեթէ սկսնակն սկզբից սխալ շարժում արեց, այդ սխալը կտպալ վորվի և ապագայում նույն գրությամբ կը կը կը վի: այդ պատճառով ել հենց սկզբից մեծ ուշադրություն պետք եւ զարձնել տառերի կամ բառերի գրության համար անհրաժեշտ ձեռքի շարժումների վրա:

Այդ նպատակին հասնելու համար ուսուցիչը պահանջում է, վոր աշակերտներն իր գրելու ժամանակ ուշադիր նայեն ձեռքի շարժումներին, ցույց եւ տալիս և բացատրում, թե այս կամ այն տառը կամ բառը գրելս ձեռքն ինչպիսի շարժումներ եւ անում, որինակը գրելիս այնպես եկանդնում, վոր աշակերտները պարզ տեսնեն իր ձեռքի շարժումները:

Սրանից հետո աշակերտներն ողի մեջ կամ սեղանի վրա մատով գրում են որինակը, ապա աչքերը փակած պատկերացնում են, թե ձեռքն ինչպիս եր շարժվում, հետո բերանացի նկարագրում են, թե ձեռքն ինչ շարժումներ եր անում, վորից հետո միայն տեղի

յե ունենում գրելը գրատախտակի վրա կամ տետրում:

9. Հոգեբանական վերլուծությունները ցույց են տվել, վոր մարդկի գրելիս լուս խոսում են, գրելիք բառերն արագությամբ վանկերի յեն բաժանում: այս յերեսութը նկատելի յե մանավանդ ոտարազգի կամ դժվար արտասանվող բառերը գրելու ժամանակ: այս դեպքում արդեն բառերն առանձնապես նկատելի կերպով վանկերի յեն բաժանվում և հետո գրվում:

Սկսնակն ավելի յե առաջ գնում, նա նույն բառը վեր եւ ածում հնչյունների և աշխատում մեկ առ մեկ արձանագրել այդ հնչյունները: սկսնակը յեթե մի բառը գժվարությամբ ե հնչյունական անալիզի յենթարկում, դժվարությամբ ել գրում է:

Այս հանգամանքն ինկատի ունենալով՝ սկսնակին այնպիսի բառեր պետք ե գրել տալ, վորոնց հնչյունական անալիզին ծանոթ են կամ հեշտ են արտասանվում: Յեթե մի նոր անձանոթ կամ մի ծանոթ, բայց դժվար բառ պիտի գրվի, պետք ե նախորոք պարզել այդ բառի հնչյունական կազմը և հետո միայն գրել տալ: Հենց այդ պատճառով ել, մանավանդ ուսման Ա. և Բ. տարիներում, պետք ե աշակերտներին գրել տալ հեշտ արտասանվող բառեր ու նախադասություններ:

Սրանից կարող ենք յեղընակացնել, վոր գրության ուսուցմանը կնպաստի այբուբեն սովորեցնելու այն մեթոդը, վորը մեծ ուշադրություն եւ զարձնում բառերի հնչյունական կազմի վրա և չի խուսափում հնչյունների մասին գաղափաք տալուց և բառերի վան: Կային վերլուծությունից:

Գրել նոր սովորող աշակերտն այնքան եւ լարվում և այնքան ե իր ուշադրությունը կենտրոնացնում

զրելու պլրոցեսսի տեխնիկական կողմի վրա, վոր հաճախ նկարում ե տառը կամ բառը, առանց միտքը հասկանալու կամ գրածը կարդալ կարենալու: Սրա առաջն առնելու համար պետք ե զրելիքի միտքը բացատրել, զրելիքն անհատապես կամ խմբովիս կարդալ տալ և հետո միայն զրել տալ. պետք ե վարժեցնել, վոր աշակերտները սովորություն դարձնեն զրելիս գրածն անձայն կամ ցած ձայնով կարդալ: Գրելուց հետո գրածը պետք ե կարդալ տալ անհատապես և խմբովին:

✓ 10. Մինչև այժմ ասածներն ինկատի ունենալով՝ մի տառ կամ մի բառ կամ կապակց միտք գրել սովորեցնելիս պետք ե առաջնորդվել մերողական հետեւյալ տեսակետերով:

ա) Ուսուցիչը գրում ե նոր տառը կամ բառը գրատախտակի վրա ցանկալի մեծությամբ, պարզությամբ և գեղեցկությամբ և այն արագությամբ, վորով զրելու յեն աշակերտներն իրենց տեսրերում:

բ) Աշակերտներն, ուշադիր գիտելուց հետո, կարդում են այդ տառը և ապա՝

գ) Ուսուցչի զեկավարությամբ բանակոր վերլուծության յենթարկում այդ տառը՝ քանի գծերից և ինչ գծերից ե կազմված, գծերն ինչ մեծություն ունեն, ինչքան են հետու իրարից, վորտեղ և ինչպես են միանում իրար հետ, տառը միշտն, վերին և ներքին տողերի հետ ինչ փոխարարերություն ունի: Այս բանակոր վերլուծությունից առաջ, հետո, կամ վերլուծության ընթացքում ուսուցիչը տառի բաղկացուցիչ ելեմենտները գրում ե իրար կողք-կողքի, իրարից բաժան-բաժան, բայց վոչ շատ հեռու, վորպեսզի աշա-

կերտներն ավելի պարզ պատկերացնեն տառի կազմը, և ապա այդ հեռու գրված մասը միացնում ե մազական գծիկներով, վորով ստացվում ե նորից հին տառը: Այս աշխատանքն ավելի պատկերավոր ե դարձնում տառի վերլուծության գործը: Աշակերտները համեմտում են այդ տառը նախկին ուրվագծերի հետ:

դ) Աշակերտները մատով ողում կամ գրասեղանի վրա գրում են տառը, կամ փայտիկներով դարսում, կավից կաղապարում այդ տառը—նայած հարմարության:

ե) Աշակերտներից մեկը կամ միքանիսը գրատախտակի վրա գրում են այդ նոր տառը, մյուս ընկերները քննադատում են այդ գրածը կամ գրածները, տեղն ու տեղն ուղղում այդ, վորից հետո գրողները նորից են գրում նույնը, վորպեսզի նկատվի, թե ինչպես դիտություններից հետո ավելի հաջող են գրում:

զ) Այսուհետեւ բոլոր աշակերտներն իրենց տեսրերում գրում են մի կամ միքանի՝ մոտ յերեք հատնույն տառից, վորի ժամանակ ուսուցիչն անցնում ե աշակերտների կողքից, նկատում ե, թե վոր աշակերտներն առանձնապես անհաջող են գրել, ընդհատել ե տալիս գրելը, կանչում ե թույլ գրողներից միքանիսին, նորից գրել ե տալիս գրատախտակի վրա, դասարանի քննադատության նյութ դարձնում, հետո ինքը նորից գրում ե մի որինակ գրատախտակի վրա և պահանջում, վոր իրենց գրածները համեմտեն այս նոր գրածի: Կամ հին որինակի հետ, և ապա կարգադրում ե աշակերտներին լրացնել տողը: Աշակերտները գրելիս լուս կամ ցածը ձայնով կարդում են իրենց գրածը:

է) Պետք ե ասել, վոր բառեր, նախադասություններ, փոքրիկ պատմություններ արտազրելիս տեղի յեւ ունենում համարյա նույն աշխատանքը, միմիայն այն տարբերությամբ, վոր այնտեղ տառի մասերն եյլն վերլուծում, իսկ բառերը կամ նախադասությունները գրության տեսակետից վերլուծելիս կանգ ենք առնում բառերի բաղկացուցիչ ելեմենտների, այն եւ տառերի ու նրանց փոխնարարերության վրա: Մանավանդ Ա. և Բ. խմբակներում աշակերտները վոչինչ չպետք ե արտազրեն առանց արտագրելիքի մասին գեղագիտական բացատրություններ լսելու, առանց գրության ձևի մասին խոսելու: Բնական ե, վոր սկզբնական վարժությունների ժամանակ բացատրությունները մեծ տեղ են բռնում, իսկ փոքրիշատե վարժվելուց հետո բացատրությունները դառնում են ավելի ընդհանուր բնույթի և խլում են քիչ ժամանակ:

11. Աշակերտը վերջիվերջո պետք ե արագ ու սահուն գրող դասունա, բայց փորձերը ցույց են տվել, վոր արագագրության վարժությունների շուտ սկսելը շատ վատ ազդեցություն ե թողնում սկսնակի ձեռագրի վրա: Տառերի ամբողջական պատկերը խեղաթյուրվում ե, հեռավորությունները վորոշ չեն լինում, յերկար տառերը կարձանում ե մոտենում են կարճ տառերին, ձեռագիրը կորցնում ե իր գեղեցիկ տեսքը:

Ուսման Ա. և Բ. տարիներում իշխում ե սովորաբար դանդաղ գրությունը, վորն ուսման յերբորդ տարվանից սկսում ե մի փոքր արագագրություն դառնալ, իսկ վերջին տարիներում լիակատար արագագրություն ե դառնում: Շատ արագ գրության յեղանակը ցանկալի չե և վոչ մի խմբակում:

Արագ գրության դեպքում աշակերտի գիրը պետք է լինի պարզ, գյուրը մբռնելի և գեղեցիկ: յեթե այս վերջին հատկանիշները բացակայում են, նշանակում ե արագագրությունը չե հասել իր բուն նպատակին:

Արագագրության նպաստում են հետեւյալ պայմանները. ա) Պարզ, անպանույն գիրը նպաստում ե արագագրության, վորովհետև բացակայող անտեղի պոչը, զարդարանքները չեն դանդաղացնում գրության չերը, զարդարանքները չեն դանդաղացնում գրության ընթացքը: Բառերի տառերի նույն ուղղությամբ գրելը (թիր կամ նույն գիր), նույնպես նպաստում ե արագագրության. յերբ գրողը գրելիս զանազան թեքությամբ ե գրում, դանդաղում ե նրա գիրը, վորովհետև ամեն անգամ նոր ձեռվ գրելուն վարժվելու համար ժամանակ ե պահանջվում: բ) Արագագրության նպաստում ե նաև տառերի փուրությունը: Ուսման Ա. և Բ. տարիներում աշակերտները պետք ե գրեն սովորականից մեծ տառերով. փոքր տառերը պետք ե 3 տո բարձրություն ունենան: Ֆրամած ե, վոր աշակերտները տարիների ընթացքում իրենց ձեռագիրն աստիճանաբար փորձացնում են, և յեթե նրանք ուսման Ա. տարում սկսեցին փոքր գրիլ, հաջորդ տարիներում նրանց ձեռագիրն անթույլատրելի չափերով կմանրանա և դըժվար ընթեռնելի կդառնա: հենց այդ պատճառով ել պահանջվում ե, վոր աշակերտները Ա. և Բ. խմբակներում մեծ-մեծ տառերով գրեն:

Յերբորդ տարվանից սկսած, արագագրության վարժությունների հետ միասին, տառերի մեծությունը միքիչ պետք ե փոքրանա, կարճ տառերի բարձրությունը պետք ե հավասար լինի $2\frac{1}{2}$ կամ 2 տո-ի: Արագագրության հիմնական պայմաններից մեկն գ) Արագագրության հիմնական պայմաններից մեկն

և նաև տառերի մազական գծերով միացած գրելու յեղանակը. համահատ տառերով դրելը կամքի ավելի մեծ լարում, ավելի հաճախակի վորոշումներ և ավելի յերկար ժամանակ և անտեղի եներգիայի ծախս և պահանջում և գիրն անտեղի չափերով դանդաղացնում: Վորպեսզի արագ և եներգիայի քիչ ծախսով դրվի, պետք և մի անընդիրար հետ միացած:

Հենց ուսման Ա. տարվանից սկսած աշակերտները պետք և պարզ գծիկներով բառի տառերն իրար այդ պատճառով ել կպատճենն այնպիսի բառեր, վորոնց գրելու համար պետք և շարժումն ընդհատել, վորպեսզի մի նոր շարժումով բառի հաջորդ մասը գրվի. Եյականն այն ե, վոր տառերը պարզ գծիկներով միացնելու տեսնենց լինի, ապագայում, այն ե՝ յերրորդ տարվանից, լիակատար կից գրության ձևը կգերիշի: Ուսման Բ. տարվա ձեռագիրը լրիվ կերպով պետք և նմանի Ա. տարվա ձեռագրին:

Մեր գպրոցներում ընդհանրապես բառի տառերն Ա. խմբակում հատ-հատ են գրում, սակայն միևնույն ժամանակ նկատված ե, վոր հատ-հատ գրելուն սովոր աշակերտները թույլ են լինում արագագրության մեջ և ապագայում մեծ գծվարությամբ են անցնում կից գրության, կամ իսկի չեն ել անցնում այդ ձևին. Դեռմանական և ոռուսական ձեռագիր պարունակող բոլոր այբբենարաններում անխտիլ բառերի տառերն իրար հետ միացած են գրված. հիմք չկա յենթաղրելու, թե հայ յերեխաների համար այդպես գրելու յեղանակը հատուկ գժվարություններ կհարուցի. իմ գործերը հակառակն են ցույց տվել:

Դ) Պետք և գգուշանաւ, սակայն, մի հանգաման-

քից. Ա. խմբակում կից գրելու դեպքում յերբեմն պատճառում են այնպիսի բառեր, վորոնց կողք-կողքի յեղող տառերն իրար նման լինելու պատճառով իրաց ին խառնվում, կամ մի տառի մի մասը մյուս տառի մի մասի հետ կցված և յենթաղրվում, վորով ընթերայլ մասի շետ գցված տուժում ե. այսպիսի գեղքերում ցանության գործը տուժում ե. այսպիսի գեղքերում բառի տառերը պետք և սովորականից մի փոքր իրար բառի հեռու գրել վորպեսզի թյուրիհացություններ շառաջանան:

Ե) Ամեն մի խմբակի աշակերտներ արագ գրության խողոված տարրերվում են իրարից, վորմանք դանդաղ և վորմանք ել արագ են գրում. կարելի յե մի միջին գրության համանել դանդաղներին քիչ իսկ արագ գրողներին մի փոքր շատ գրել տալով: Արագագրության վարժությունները պետք և սկսել թելադրության աշխատ սեբով. ուսուցիչը ծանօթ և հեշտ գրվող բառերից մի փոքրիկ հոգված և թելադրում դասարանին այնպիսի արագությամբ, վորը ցանկալի յե համարում. ակզենտական վարժությունների ժամանակ աշխատանքի մեջ վորով թերություններ կնկատվեն, բայց հետո աշակերտները կհարմարվեն ուսուցչի պահանջնեն:

Դ) Բարակ գիրը ևս իր հերթին նպաստում ե արագագրության, վորովհետև բարակ գիրը քիչ եներգի վատնություն և պահանջում: այի վատնություն և պահանջում:

12. Մինչև այժմ միքանի անգամ խոսք յեղական մասին, վոր գրելիս աշակերտները տառերի հիմնական գծերը միևնույն ուղղությամբ պետք և գրեն, սակայն գծերը միևնույն ուղղությամբ պարզվել այն խնդիրը, թե տառերը սակայն գետ չե պարզվել այն խնդիրը, թե տողի գերաբերմամբ ուղղի անկյուն են կազմելու, թե թեք կտրվածք պետք և ուղղությունն զբականությունն զբաղված ե ինչ մասնկապարժական զբականությունն զբաղված ե

ուղիղ յել թեք գրության հարցով, բայց մինչև որս դեռ վերջնական լուծում չի ավել այդ հարցին: 1882 թվին Դերմանիայում տեղի ունեցած բժշկական համագույնացուցանաշեց: 1891 թվին Լոնդոնում գումարված առողջապահական կոնգրեսուն ուղիղ գրությունը ցանկալի համարեց: 1910 թ. Պարիզի միջազգային գպրոցական առողջապահական կոնգրեսուին այդ հարցը քննելիս մասնակող 26 անդամից 12 ձեռնպահ մնացին, 9 հոգի ուղիղ, իսկ 5 հոգի թեք գրության ոգտին ձայն տվին: Մանկավարժական զանազան գրքերի հեղինակներից վոմանք ուղիղ և վոմանք ել թեք գրության կողման կից են:

Պարզ յերեսում ե, վոր այս խնդիրը դեռ իր վերջնական լուծումը չի ստացել, սակայն պետք ե ասել, վոր ուղիղ գրության կողմանկիցներն ավելի շատ են, թեև գործնականի մեջ, թէ հասարակական կյանքում բածված:

Ուղիղ գրության կողմանկիցները պնդում են, վոր այդ կերպ գրելու ժամանակ աշակերտներն առողջ թեք գրության ժամանակ: Զանազան գպրոցներում կրության կողմանակիցների պնդումը ճիշտ ե:

Ուղիղ գրության հակառակորդներն ասում են, վոր ուղիղ գրության ժամանակ հնարավոր չեցան կամ արագությամբ գրել. կողմանակիցներն առաջարկում են ուղիղ գրելիս գրիչը դնել ցուցամատի և միշտին մատի մեջ տեղը և այնպես գրել. այդ կերպ հնարավոր և զառնում ցանկալի արագագությունը:

Քանի վոր այս խնդիրի մասին դեռ վերջնական կարծիք չկա, թույլ պետք ե տալ ուսուցչին ընտրելու այս կամ այն ձևը, սակայն ավելացնելով, վոր թեք գրելիս տառերի հիմնական գծերը տողերի համեմատությամբ տալու յեն $10^{\circ} - 15^{\circ}$ անկյուն կազմող մի կտրվածք, այսինքն տառերի թեքությունը շատ քիչ պետք ե լինի:

13. Զեռագրի խնդիրն այն դեպքում կանոնավոր հիմքերի վրա կրպի, յեթե գպրոցում ընդունվի գրության մի ձեվ, վորպեսզի աշակերտը գպրոցական բոլոր տարիների ընթացքում նույն ձեռագրով գրի, և այդ ձեռագրով գրելը նրա համար վերջնական սովորություն դանաւ: Գրության միքանի ձեեր գործածած աշակերտը զեղեցիկ չի գրում, զանազան ձեեր իրար և խառնում, սահում չի գրում, վորովհետև գրության ժամանակ հանկարծ գրության տարրեր ձեեր են արթնանում նրա գիտակցության մեջ, և հաճախ կանգեա առնում և մատածում, թէ վոր ձեռվ գրի. մի ձեռվ գրելուց հետո յերբ աշակերտին մի ալ ձեռվ են գրել սովորեցնում, այդ նոր ձեին վարժվելու համար գրել սովորեցնում, այդ նոր ձեին վարժվելու: Մեր նա իզուր տեղը յերկար ժամանակ և կորցնում: Մեր զապրոցներում վոչ միայն տարրեր ուսուցիչների աշակերտներ տարբեր ձեւ են գրում, այլ և նույն ուսուցչի կերտներ միատեսակ չեն գրում: Յանկալի յետական դպրոցների համար գրության ամենանպատականարմար ձեւը պարտադիր գործակություն:

Վորպեսզի աշակերտը գրության ցանկալի ձեին վարժվի և մի կայուն լավ ձեռագիր ձեռք բերի, պետք ամեն բան (թվեր, խնդիրներ, գեկուցում, շարագրուեա ամեն բան (թվեր, խնդիրներ, գեկուցում, շարագրուեա ամեն բան (թվեր, խնդիրներ, կայլն) գրի գեղագրական պաթյուն, քաղաքածքներ և այլն) գրի գեղագրական պաթյուն, քաղաքածքներ և այլն) գրի գրավոր բոլոր աշխանցների համաձայն: Յերբ գրավոր բոլոր աշխա-

տանքները նույն վոգով առաջ տարվեն, այն դեպքում
միայն աշակերտը կյանք դուրս կդաւնթեռնելի, սա-
հուն և գեղեցիկ ձեռագրով:

14. Հենց առաջին խմբակից աշակերտները պետք
ե գրեն արտադրելով, թելադրությամբ և շարադրելով:
Հոգեբանական վերլուծությունը ցույց տվեց, վորդը ու-
թիան այս ձեերն իրարից տարբերվում են, վորովհետեւ
ամեն մեկի մեջ տարբեր մոմենտ և գերակշռություն
ստանում, և ամեն մի պրոցես տարբեր ձեռվել և սկսվում:
Դպրոցական փորձն ել իր հերթին ցույց և տալիս, վոր
այդ աշխատանքներից մեկի մեջ վարժ աշակերտը
իւստանքները կատարելիս, որ՝ միմիայն արտագրու-
թյուններ կատարած աշակերտը համարյա թի չի կա-
րողանում ամենահասարակ արտահայտությունները
ել ուսուցիչը հենց Ա. խմբակից պետք և գրության այս
յերեք յեղանակներին ընտելացնի աշակերտին: Այս կերպ
զրագոր աշխատանքների մեջ ավելի մեծ բազմազա-
դություն և հետաքրքրություն և մտնում, և աշակերտի
մազան ունակություններն են մարզվում:

Ուսամ Ա. տարում արտագրության ասիթները
շատ են լինում, արտագրության աշխատանքն այստեղ
գերակշիռ դեր և ունենում:

Մի բառ կամ մի փոքրիկ նախադասություն թե-
լ սդրելուց առաջ պետք և թելադրելիքը հնչյունական
վերլուծության յենթարկել, յերբեմն նույնիսկ նախո-
րոք զրատախակի վրա զրել, ջնջել և հետո զրել տալ-
ցանկալի յե նախադասությունները կազմել անցյալում

իրենից հորինելու յեվ գրելու կամ շարադրելու աշխա-

տանքը դժվար է Ա. խմբակի աշակերտի համար: Հետևյալ
կերպ հնարավոր և աշակերտին վարժեցնել այդպիսի
աշխատանքի: ուսուցիչը ցույց և տալիս մի իր կամիրեր
և պատվիրում, վոր աշակերտը գրի այդ իրերի անուն-
ները, ցույց և տալիս մի պարզ նկար, վորի վրա իրեր
կան նկարված, կամ մի պարզ գործողություն և պատ-
վիրացված (յերեխան խաղումն, ջրում են ծառը և այլն),
և պատվիրում, վոր գրեն տեսածի մասին բառեր կամ
մի կամ յերկու նախադասություն, կամ առաջարկում
և անցյալում գրածներից մի փոքրիկ բան ըստ ցան-
կության վերհիշել և գրել: Մի այլ ձեկի աշխատանք ևա.
աշակերտներն առարկաներ են նկարում և տակը գրում
առարկաների անունները (ծաղիկ, այծ, տուն, շուն և
այլն). գրում են որապահների, շաբաթվա որերի, ամիս-
ների անունները. դաշտերից հավաքած իրերի անուն-
ները գրում են թղթի կտորների վրա և կպցնում իրե-
րին, արձանագրում են բնության աչքի ընկնող յերե-
պույթների մասին (որ՝ այսոր կարկուտ յեկավ, ծիա-
ծան տեսանք, ծիծենակ տեսանք, այսոր ձյուն յեկավ,
տերենները թափվում եյին և այլն), գրում են իրենց
և ուրիշների կատարած աշխատանքների մասին (ծառեր
տնկեցինք բակում, ծաղկամանները դասատուն բերինք,
բալ բաղեցինք և այլն): Այս բոլորը շարադրության
նախնական փորձերն են:

15. Մինչև այժմ նկարագրված մեթոդական խոր-
հուրգները մեծ մասամբ վերաբերում եյին Ա. խմբա-
կի պարագմունքներին և այն հաջորդ խմբակներին,
վորոնց աշակերտները հենց սկզբից գրելը սովորել են
մեթոդական ցանկալի տեսակետներով: Սակայն իրա-
կանությունն այլ բան և ցույց տալիս. մեր զպրոց-
ների բարձր խմբակների աշակերտների զգալի մեծա-

մասնությունն անտանելի վատ ձեռագիր ունի, և այդ աշակերտությունը կյանք և դուրս գալիս այդպիսի անձոնի ձեռագրով: Վորպեսզի այդ շրջանավարտներն ապագայում ուրիշներին չտանջեն իրենց ձեռագրով, պետք և դպրոցը հենց այժմյանից ամեն ջանք ու ձիգ դործադրի ուղղելու աշակերտների ձեռագիրը: Ձեռագիրը ուղղելը հնարավոր է, յեթե ուսուցիչն իր աշխատանքների ժամանակ առաջնորդվի հետևյալ տեսակետներով:

ա) Նախ և առաջ նա պետք է ունենա այն անկասկած համոզումը, վոր հնարավոր և ուղղել աշակերտների ձեռագիրը, այն ել կարձ ժամանակում: Իմ կատարած փորձերը և դիտողություններն ինձ բերել են այն համոզման, վոր ամենավատ, անտանելի ձեռագիրը ունեցող աշակերտի գիրն անգամ կարելի յե ուղղել. ձեռագրի տեսակետից թույլ դասարանի գիրը կարելի յե ուղղել մի, առանալելն յերկու ամսվա ընթացքում:

բ) Ձեռագիրն ուղղելու աշխատանքի ժամանակ բոլոր ուսուցիչները պետք է տոգորվեն նույն իդեալով. նրանք մեթոդական միքանի հարցերի մասին պետք և մի վորոշ համոզման գան և միասին, իրար լրացնելով կազմակերպեն գալիք աշխատանքները: Այդ վորոշումից հետո տեղի ունեցող ամեն մի տեսակի գրավոր աշխատանք պետք և գրվի ընդհանուրի կողմից ընդունված սկզբունքների համաձայն: Յեթե այդ ընդունած ընդհանուր կարգից նույնիսկ պատահական շեղումներ են լինում, այդ շեղումները մեծապես վնասում են

գ) Խմբի ձեռագիրն ուղղելու փորձերից առաջ պետք և մի լավ և հիմնովին ուսումնասիրի աշակերտների նախկին գրածները և այդ ուսումնասիրությունից հանել միքանի ընդհանուր յեղակացություններ

այն մասին, թե հատկապես ինչ խնդիրներում ե աշակերտների ձեռագիրն անկանոնություն ցույց տալիս. ուսուցիչը պետք է իմանա, թե վոր տառերը վատ են գրում, ուղղությունների մեջ ինչ անկայություն և նկատված, տառերի մեծությունների և հարաբերության մեջ ինչ թերություններ են աչքի ընկնում և այլն:

դ) Այսուհետեւ յեղող ամեն մի գրավոր կամ իրար հաջորդող միքանի գրավոր աշխատանքների միջոցով ուսուցիչը ծրագրում և այս կամ այն թերությունը վերացնել, որինակ՝ ուշադրություն և դարձնում մի անգամ այս կամ այն դժվար գրվող տառի գրության, մի այլ անգամ տառերի մեծության, ուրիշ անգամ տառերի փոխհարաբերության(տառերը չուկ չեն գրում) և այլ խնդիրների վրա, այնպես վոր ամեն մի գրավոր աշխատանք մի հատուկ նպատակ և հետապնդում:

ե) Բայց ամեն մի գրավոր աշխատանք մասնավոր նպատակի հետապնդելուց առաջ պետք է ընդհանուր նպատակ ել ունենա, այն և առհասարակ ձեռագիրն ուղղել: Այդ պատճառով ել ուսուցիչն ամեն մի գրավոր աշխատանքի որինակ պետք և վերլուծի ընդհանուր տեսակետից և ապա կանդ առնի իր հատուկ նպատակի նկարագրի վրա:

զ) Ուսուցիչը գրավոր աշխատանքը, սկզբներում քանակով փոքր, գրում և գրատախտակի վրա գեղագրական պահանջների համաձայն: Աշակերտների հետ մանրամասն զրույց և ունենում դրվածի գրության ձևի մասին, այն և ինչպես են բառերի տառերի հիմնական, ձեռերը մեծությունները, տողերի հետ ունեցած հարաբերությունը, իրար հետ ունեցած հարաբերությունը, կցման տեղերը, բառերի իրարից ունեցած

հեռավորությունը և այլն։ Այս աշխատանքի ժամանակ աշակերտները պետք ե ակտիվ մասնակցություն ցույց տան։

է.) Անուհետեւ ուսուցիչն աշակերտներից մեկին կամ միքանիսին գրատախտակի աղատ տեղի վրա գրել ե տախտ այս կամ այն բառը կամ նախադասությունը. ամբողջ խումբը քննադատում ե այդ գրածը, աշակերտների աչքի առաջ ուղղումներ են կատարվում, ավելի լավ որինակներ գրվում, վորից հետո ուսուցիչը մի վերջին անգամ աշակերտների ուշադրությունը հրավիրում ե ձեռագրի որինակների կողմերի վրա և առաջարկում ե արտագրել գրատախտակի վրա գրածը։ Այստեղ մեր ծրագրից դուրս ե, թե ուղղագրական ինչ և ինչպիսի բացարություններ պետք ե տալ։

16. Թե ինչպես պետք ե աշակերտը նստի զրելու ժամանակ և ինչպես և բռնկլու գրիչը, — դպրոցական առողջապահության ամենակարևոր խնդիրներիցն են։ Դպրոցական միքանի հիվանդություններ կարդալու և գրելու ժամանակ վատ նստելու հետևանքն են այդ հիվանդություններն են՝ կարճատևություն, աչքացավ կամ աչքերի հոգնածություն, վողնաշարի ծռություն, աջև ձախ ուսերի անհավասար բարձրություն, կրծքի ցավեր և այլն։

Դպրոցական առողջապահությունը քննելով այդ հիվանդությունները՝ գտել ե այնպիսի միջոցներ, վորոնց ճշգրիտ գործադրության գեպքում չեն առաջանալ հիշված հիվանդությունները։ Ուսուցիչն ամեն ջանք պետք ե գործադրի, վոր աշակերտները գրավոր աշխատանքներ կատարելիս անպայմանորեն յենթարկվեն այդ պահանջներին. այդ պահանջներն հետևողականությամբ պետք ե իրագործել մանավանդ առաջին խմբակում, վորովհետեւ գրելիս վատ ձևով

նստելուն սովորած յերեխային ապագայում կանոնավոր նստել և աշխատել սովորեցնելը մի մեծ դժվարություն ե։

Առողջապահական այդ կանոնները հետևյալներն են.

1. Աշակերտը պետք ե նստի աղատ, անկաշկանդ և ուղիղ, մարմնի վերելի մասը կարող ե շատ աննշան կերպով մի փոքր առաջ ծովել։

2. Կուրծքը չպետք ե շփվի սեղանի յեղրին, այլ հեռու լինի 3—5 սմ։

3. Յերկու ուսերն ել պետք ե նույն բարձրությունն ունենան. սրանց միացման գիծը պետք ե զուգահեռ լինի սեղանի յեղրի գծին։

4. Մեջքի վողնասոյւնը վոչ միայն առաջ, այլ և չպետք ե ծովի դեպի կողք։

5. Աշակերտի մարմնի ծանրությունը պետք ե հավասար բաժանվի նստատեղու յերկու մասերի վրա։

6. Վոտի ազդեցիրի $\frac{2}{3}$ կամ $\frac{3}{4}$ մասն ե լինելու նստարանի վրա, իսկ սրուցներն ուղղահայաց, նստարանի տախտակի հետ ուղղիղ անկյուն կազմելով իջնելու յեն ներքեւ։

7. Վոտի թաթերը հենվելու յեն հատակին կամ այդ նպատակով հատուկ շինված հենարանին։

8. Վոտի թաթերի ծայրերն իրար հավասար պետք ե լինեն, մեկն առաջ չպետք ե դրվի։ Վոտի մի թաթը մյուս թաթից հեռու պետք ե լինի մի վոտնաչափ։

9. Վոտերը չի կարելի իրար կպցնել և մանականդ իրար վրա դնել։

10. Գլուխը գորելիս չպետք ե աջ կամ ձախ ձևել. կարելի յե շատ թեթև առաջ ձռել, բայց ձիւշ՝ զլիսի կարելի յե շատ թեթև առաջ զլիսի կամ յերկու ականջ-լայնության կտրվածքի առանցքը կամ յերկու ականջ-լայնի միջից անցնող ուղիղ գիծը պետք ե զուգահեռ լինի սեղանի յեղրի գծին։

11. Յերկու աչքերն ել պետք ե հավասար հեռավորություն ունենան տեսրից, այդ հետափորությունը առնվազը հավասար ե լինելու 25°-ից 30°-ի:

12. Մեկ կամ յերկու տող գրելուց հետո պետք ե տեսրը բարձրացնել:

13. Աչքերը միացնող գիծը պետք ե լիակատար հորիզոնական լինի:

14. Մարմի վերին մասը թեթևակի հենվում ե գրասեղանի վրա գտնվող ձեռքերի վրա: Գրասեղանի վրա յեն գտնվում յերկու ձեռքի կանգուներն իրենց յերկարության $\frac{2}{3}$ -ով կամ $\frac{3}{4}$ -ով:

15. Յերկու կանգունն են ման ձեռ են դրվում գրասեղանի վրա. յեթե այդ յերկու կանգուների գծերը շարունակենք, հանդիպման կետում կստացվի մոտավորապես մի ուղղանկյուն. կանգունները սեղանի յեղանքում են 45° անկյուն:

16. Կանգունի արմունկները մարմից հեռու պետք ե լինեն ձեռքի թաթի լայնքի չափ:

17. Գրելիս կանգունը, ձեռամեջը և ցուցամատը մի զծի վրա յեն:

18. Ձեռքի մեջը (ափը—որոշելու) մեղանի յեզրի նկատմամբ վոչ ուղղանայց ե և վոչ ել զուգահեռ, այլ ընդունում ե մի միջին թեք դիրք:

19. Առաջին յերեք մատերը բնուում են դրիչը. Վրիչը տեղափորվում ե միջին մատի և ցուցամատի կամ ցուցամատի և բութ մատի միջ տեղը:

20. Ձեռքի թաթը հենվում ե չորրորդ և հինգեներս են ծոված:

21. Ամենից յերկար ե ձգված միջին մատը, վորից մի յեղունկաչափ յետ և ցուցամատը, սրանից ել

նույնչափ յետ ե բութ մատը: Այս յերեք մատերը վոչ ուժեղ ծոված պիտի լինեն և վոչ ել փայտացած-ձգված դեպի առաջ, կարող են շատ թեթև կորացած լինել:

22. Գրիչը պետք ե գրելիս թեթև սեղմել և վոչ ջղաձիգ կերպով:

23. Զախ ձեռքը տեսրի տեղը վկոխում ե գրելու ժամանակ և տեսրը պինդ պահում ե մի տեղում:

24. Գրչակոթի վերին ծայրը պետք ե ուղղված լինի դեպի բազուկի վերին մասի վերին կեսը և վոչ դեպի ուսը կամ կուրծքը:

25. Գրելիս գրչի ծայրը պետք ե գտնվի կրծքի մեջանքի դիմացը, ծայրը պետք ե հեռու լինի ցուցամատից 3—4 սանտիմետր:

26. Ա. խմբակում 20 ըոպեյից ավելի յերկար ժամանակ չպետք ե գրել տալ. այդ 20 ըոպեյի ընթացքում ևս մի ընդհատումն անհրաժեշտ ե:

27. Արտագրության կամ նկարչության որինակը պետք ե զրված լինի վոչ թե տեսրի կողքին, այլ տեսրի վերեւում, աշակերտի առաջ:

28. Տեսրը պետք ե զնել կրծքի դիմաց. ուղիղ գրության ժամանակ տեսրի ներքեւի յեզրը պետք ե զուգահեռ լինի սեղանի յեզրին, թեք գրության ժամանակ տեսրի ներքեւի յեզրի ծախ անկյունը գտնվում ե կրծքի դիմաց, իսկ աջ ծայրը մի փոքր վերև ե բարձրացած. տեսրի ներքեւի յեզրի զծի շարունակությունը կտրելով զբանականի դեպի աշակերտը դարձած պատճենը կամ ձեռամատի տակ լինի անկյուն, այսինքն համար յեզրը՝ պետք ե տա 15°. ի անկյուն, այսինքն համար պատճենը տակ լինի անկյուն գտնելի թեքության:

IV. ԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ

Մեթոդական ճիշտ աշխատանքի ժամանակ անգամ աշխատանքի դիմանքը կամ ձեռամատի ինդիքսը չի կարելի գրական հիմքերի

Վրա դնել, յեթե գրության համար անհրաժեշտ պարագաները չեն համապատասխանում մանկավարժական առողջապահական պահանջներին, Աշակեր տիբնախոսական առանձնահատկությանը չհամապատասպատասխանող, կամ վատ ու փշացած գրչածայրը, անհամապատասխան թուղթն ու թանաքը, մարմնի առանձնատկությանը չհամապատասխանող գրասեղանը խանգարում են գործը, թույլ չեն տալիս, վոր մեթոդափես տարվող աշխատանքը տա այն հետեւանքը, վորը նեյին մանկավարժական գոնե տարրական պահանջներին,

Ներկայի առողջապահությունն այս խնդրի մասին յեկել ե այնպիսի դրական և անկասկածելի յեղրականել այդ պարագաները շինել տալու ժամանակ:

Ա. Գրասեղան

Գրասեղանը պետք ե այնպիս շինված լինի, վոր աշակերտը կարողանա ազատ շարժվել, կանգնել ու ստել, գրելու ժամանակ իրանը չծռել, մկանները չլարել, կուրծքը չկպցնել գրասեղանի յեղրին, ձեռքի կանգուններն աղատ շարժել վոտքերն ամուր և ազատ իմնել մի պատվանդանի: Գրասեղանը չպետք ե խանցեսներին:

Գրասեղանը պետք ե պարզ կառուցվածք ունենա, հեշտ մաքրվի, դասարանը մաքրելու աշխատանքներին լինի:

Վերջերս շինում են մի տեղանի շարժական գրասեղան, վորը, աշակերտի հասակի պահանջների համաձայն, կարելի յե մեծացնել կամ փոքրացնել, հաղիվ թե այսպիսի գրասեղանն ընդհանուր ընդունելություն գտնի, վորովհետև թանգ ե նստում, ավելի շուտ ե գչանում և մեծ տեղ ե բռնում: Մեր յերկրի պայմաններն ինկատի ունենալով՝ մանկավարժներից շատերն առաջարկում են գպրցներում գործ ածել յերկու տեսառաջարկում են գպրցներում գործ ածել յերկու տեսականական: Յերեք և ավելի տեղանի գրասեղանների գրասեղանը պահաք ե գուրս հանել գործածությունից, վորովհետև աշակերտները գուրս ու ներս անելիս իրարխանգարում են, բացի այդ, հաղիվ թե միենալուն գրասեղանը բավարարի յերեք կամ չորս աշակերտի մարմակազմի պահանջներին:

Այն գրասեղանը, վորի վրա նստում ե աշակերտը, ըստ ամենայնի պետք ե համապատասխանի նրա մարմակազմի առանձնահատկությանը և շինված լինելայնական պահանջների համաձայն, վորոնց ուղղապահական այն պահանջների համաձայն, վորոնց մասին խոսը յեղավ:

Աշակերտական գրասեղանը կազմված ե լինում յերկու ճիմսական մասից, բուն գրասեղանից, վորի վրա դրվում ե տեսությունը գրելիս, և նստարանից (թիկունքի հետ միասին), վորի վրա նստում ե աշակերտը:

1. Բուն գրասեղանի մասերը: ա) Գրասեղանի դեպի աշակերտը դարձած յեղը բարձրությունը նստապի աշակերտը դարձած յեղը բարձրությունը նստելու տեղից հավասար պետք ե լինի աշասնի նստելու տեղից հավասար պետք ե լինի աշակերտի հասակի $15^0/0$ կամ $17^0/0$ ին, այս դեպքում, բակերտի հասակի $15^0/0$ կամ $17^0/0$ ին, այս դեպքում, կանգունի արմունկը գուլն աղատ կախած դեպքում, կանգունի արմունկը կը հավասար ե լինում գրասեղանի յեղը բարձրության, կանգունը աղատ, առանց վեր ու վար ծովելու տեղ կանգունը աղատ, առանց վեր ու վար ծովելու տեղ:

Դավորվում ե գրասեղանի մակերեռյթի վրա: Այս դիրքում ձեռքերն ազատ են աշխատում, և աչքերը ցանցեթե գրասեղանի այդ յեղը հիշյալ չափից ավելի բարձր լինի, ստեղծվում է անսորմալ վիճակ, աջ ուսը վերև և բարձրանում, ձախը ներքեւ, վողնաշարը թեռևակի ծովում ե, ձեռքերը գրելոց շատ շուտ են հոգնում, իսկ յեթե այդ յեղը ցանկալի չափից ցածր ե, աշակերտն այդ դեպքում անտանելի չափերով կռանում ե և շուտ հոգնում:

Գրասեղանի յեղը և նստարանի մեջ յեղած տարածությունը կոչվում ե դիֆֆերենցիա:

բ) Գրելիս մարմնի դիրքն այն ժամանակ ցանկերտը դարձած յեղը նստարանի դեպի աշառղղահայաց գծից հեռու չինի, կամ նույն գծի վրա չընկնի, այլ գրասեղանի այդ յեղըն այդ գծից ավելի դեպի ներս, դեպի աշակերտն ընկնի. այդ դեպքում անցնում ե գրասեղանի տախտակի միջով. այդ գծին կտրման տեղից մինչև գրասեղանի դեպի աշակերտը յեղը տարածությունը կոչվում ե բացասական դիմում լինի Յ կամ 4 սանտիմետրի: Դիստանցիան հավասար է կերպի, յերք նստելու տեղի և գրասեղանի յեղը յեն, իսկ դիմումը տանցիան դրական է, յերբ գրասեղանի և նստարանի յեղը յերքի մեջ դատարկ տարածություն ե մնում: Դրական և զերս դիմումը գրասեղանի տանցիան դիմումը հետև այդ կերպ շինված գրասեղանների վրա գրելիս աշակերտը կռանում է դեպի առաջ և նստարանի վրա կանոնավոր չի նստում:

Միակ ցանկալին բացասական դիմունցիան ե, բայց յերբ աշակերտն ուզում է կանգնել, հանգիստ, ազատ նստել կամ շարժվել, բացասական դիմունցիան ազատ նստել կամ շարժվելու վերացնելու համար խանգարում ե: Այս թերությունը վերացնելու համար վոմանք առաջարկում են նստարանը շարժական շինել, վորպեսպի աշակերտը կանգնելու ժամանակ նստարանը վորպեսպի աշակերտը կանգնելու ժամանակ նստարանը յետ հրի և ազատ կանգնի. այս միջոցն այնքան ել ցանկալի չե, վորովհետեւ ավելի ծախք և պահանջում ցանկալի չե, վորովհետեւ ավելի ծախք և պահանջում և միմիայն կանգնելու ժամանակ և լայն տարածություն և ստեղծվում, բայց վոչ նստած ժամանակ, Ավելի հանձնարարելի յե գրասեղանի յերեսը շարժական կամ առաջին մասը ծալովի շինել. այդ դեպքում վոչ միայն կանգնելիս, այլ և նստած ժամանակ, յերբ աշակերտը կամ նկարում, կարելի յե լայն տարածություն և ստեղծել: Մի ուրիշ հասրավորություն ել կարելի յե նստարանը անկախ, գրասեղանի հետ չկապված շինել, վորովի հնարավորություն կստեղծվի նստավանի տեղը փոխելով դիմունցիան դրական կամ բացասական դարձնել: Սա յել իր բացասական կողմն ունի, վորովհետեւ աշակերտներն ամեն անգամ պետք նստարանի տեղը փոխեն, բայց հաճախ չեն փոխում և նստարանի տեղը փոխեն, և հաճախ ուսուցչի կամ սխալ չափերով են փոխում, և հաճախ ուսուցչի միջամտության կարիք ե զգացվում: Այս թերությունը մասամբ վերացնելու նպատակով կարելի յե գրասեղանը անշարժ կերպով ամրացնել մի տեղում և նշանակած անշարժ լինի այն տեղի համար, վորի վրա նստարանը յեթե լինի, բացասական դիմունցիա կստեղծվի:

գ) Սովորական գրասեղանի յերեսն ունենում ե և հորիզոնական և թեք մակերեռյթ. թեք մակերեռյթը ըկություն ավելի մեծ տեղ և բռնում, և նրա վրա յետեղի ունենում աշխատանքը: Գրասեղանի յերեսի

թեքությունը պետք ե կազմի $12^{\circ} - 15^{\circ}$, այլ խոսքով
ասած՝ աշակերտի կողմը դարձած յեզրը ցածր պետք ե
լինի բարձր (*հորիզոնական*) մասից $7 - 10$ սանտի-
մետով: Գրասեղանի թեք մասի լայնքը հավասար
պետք ե լինի $35 - 40$ սանտիմետրի: Սեղանի հորիզո-
նական մասի լայնքը սովորաբար հավասար ե լինում
10 սանտիմետրի: այդտեղ են գրվում թանաքամանը,
մատիտն ու գրիչը:

գ) Գրասեղանի յերկայնքը մեկ աշակերտի հա-
մար այնքան պետք ե լինի, վոր աշակերտի յերկու
կանգունը սեղանի վրա դրվելու դեպում չխանգարի
կողքի ընկերոջը: այս յերկայնքը հավասար պետք ե
լինի աշակերտի հասակի $42^{\circ}/_{\circ}$ ին և առհասարակ պա-
կաս չպետք ե լինի 55 սանտիմետրից:
հ) Սեղանի առաջին, գրսի մասի բարձրությու-
նը հատակից հավասար պետք ե լինի սեղանի յետեկի
աշակերտի կողմ դարձած բարձրությանը՝ ավելացրած
7—10 սանտիմետր: ուրիշներն առաջարկում են $9 - 11$
սանտիմետր:

զ) Այժմ վոճանք շինում են այնպիսի գրասե-
ղաններ, վորոնց յերեսը կարելի յե և հորիզոնական,
և թեք դարձնել: հորիզոնական դիրք տալիս սեղանի
թեք մասը չպետք ե բարձրանա և հավասարվի բարձր
մասին, այլ բարձր մասը պետք ե իջնի և հավասարվի
ցածր մասի բարձրության:

2. Նստարանի մասերը: Նստարանը կազմված ե
յերկու մասից՝ նստելու տեղից և թիկունքից կամ
մեջքից:
ա) Նստելու տեղի կամ նստարանի լայնքը պետք
է հավասար լինի աշակերտի հասակի $20^{\circ}/_{\circ}$ ին կամ

ազդը $\frac{2}{3}$ մասին: ազդը էպետք ե ամբողջովին
տեղափոխն նստարանի վրա, այլ $\frac{2}{3}$ կամ $\frac{3}{4}$ մասով,
վորովհետեւ այս կերպ արյան շրջանառությունն ավելի
լավ ե կատարվում, և աշակերտն ավելի հեշտությամբ
ե շարժման վիճակի մեջ մտնում: Նստելու տեղի
յետեկի մասը հավասար չպետք ե լինի առաջին մասին,
այլ մի փոքր գոգավոր, վորովհազի աշակերտն ավելի
լավ և ամուր տեղափորվի և առաջ չսահի: Նստարանի
առաջին յեզրը պետք ե կլորացվի:

բ) Աշակերտի սրունքներն ուղղահայց պետք ե-
րչնեն սերքն և վոտքի թաթերն ազատ և հաստատու-
սմբանան հատակին կամ մի այլ հենարանի: Վոտքերն
այս դիրքը կունհնան այն դեպքում, յեթե նստարանի՝
հատակից ունեցած բարձրությունը հավասար լինի
աշակերտի հասակի $28^{\circ}/_{\circ}$ ին կամ աշակերտների սրունք-
սերի ու թաթի բարձրության:

գ) Յեթե դպրոցի հատակը ամուր, չոր տախտա-
կից և շինված, ձեղքվածքներ չունի, և դասարանը լավ
է տպքացվում, աշակերտի վոտի թաթերը կարող են
և հատակին, հակառակ դեպքում ցանկալի յե
շինվել վոտի տակի համար տախտակյա հենարան,
շինել վոտի տակի համար տախտակից, այլ միքա-
րայց վոչ թե մի հատ լայն տախտակից, այլ միքա-
րայց զուգահեռ զնացող սեղ տախտակներից, վո-
րոնց մեջ բացվածքներ կան: Այս դեպքում աշակեր-
տի վոտի կեղտն այդ բացվածքներով սերքեն թափ-
ում և չի կոխկը տվում, կոշիկներից ջուրը սերքեն ե
հոսում, կոշիկներն ավելի շուտ են չորանում, վորով-
հասում, կոշիկներն ավելի շուտ են չորանում, վորով-
հասում, կոշիկներն ավելի շուտ են չորանում, վորով-

Հետ միասին պետք ե աշակերտի վոտքի թաթի յերկայնքից մի փոքր ավելի մեծ լինի:

Վոտքերը ձգած, մեկնած ժամանակ թաթերը պետք ե հենվեն մի այլ տախտակյա հենարանի, վորոն ամրացված ե լինելու գրասեղանի վոտքերի առաջին մասին:

7) Գրելու ժամանակ իրանը մի փոքր առաջ ե ծովում, գավակը (գոտկատեղից մի փոքր վերև) այդ զեպքում պիտք ե հենվի մի հենարանի, հանգիստ նստած ժամանակ ևս մեջքը մի հենարան պիտի ունենա: Այդ նպատակի համար նստարանի յետևի մասում շինվում ե հենարան կամ թիկունք, վորը պետք ե գրասեղանի դեպի աշակերտը դարձած յեղից վորոշ հեռավորություն ունենա: այդ հեռավորությունը հավասար ե լինելու աշակերտի հասակի $17^{\circ}/_0$ կամ $19^{\circ}/_0$ -ին, կամ նստարանի լայնքին՝ հանած բացասական դիստանցիայի սանտիմետրները (3-4 սանտ.):

Հենարանի (թիկունքի) բարձրությունը նստարանից (նստելու տեղից) հավասար ե լինելու դիֆֆերենցիային (գրասեղանի գեղի աշակերտը դարձած յեղի և նստարանի - նստելու տեղի հեռավորությանը): ավելացրած $2^{1/2}$ -ից մինչև 4 սանտիմետր. այսպիսի բարձր հենարանի վերին մասը պետք ե մի փոքր, քում կարելի յե թիկունքն աղատ յետև հենել: Հենարանը շինվում ե նաև կարճ, այնպես վոր միայն գավակի մասն ե հենվում թիկունքին:

Մեջքի հենարանը կարելի յե շինել լրիվ, նստարանի ամբողջ յերկայնքով, բայց վորպեսզի գրասեղանը թեթև լինի, և աշակերտներն ավելի աղատ լինեն

իրենց շարժումների մեջ, ցանկալի յե ամեն մի աշակերտի համար մի թիկունք շինել, բայց հարմար մեջքերի լայնքին: Վումանք առաջարկում են մեջքի բարձր հենարանի վերին մասից մի փոքր ներքեւ յեղող մասը միքիչ դուրս ուռած շինել (գոգավոր), բայց շատերը դեմ են այլ ձևին:

3. Դպրոցը զանազան հասակի աշակերտների համար պետք ե ունենա զանազան մեծության գրասեղաններ. ամեն մի աշակերտի մարմնի մասերը չափելուց հետո պետք ե ընտրել նրան համապատասխան գրասեղան:

Պրոֆ. Երիսմանը 100 սանտիմետրից մինչև 170 սանտիմետր բարձրություն ունեցող աշակերտների համար առաջարկում ե տարրեր մեծության գրասեղաններ. 100—110 սանտիմետր բարձրություն ունեցող աշակերտների համար մի տեսակ գրասեղան ե առաջարկում, այնուհետեւ յեղող ամեն մի հավելյալ տարր սանտիմետրի համար այլ չափերի գրասեղաններ սառաջարկում. այսպիսով ստացվում են 1—7 համար ե առաջարկում. այսպիսով ստացվում են 1—7 համար ունեցող գրասեղաններ, վորոնցից մեկից մինչև չորս համարն ավելի հարմարեն Ա. աստիճանի, իսկ 5-րդից մինչև 7 համարն ավելի յոթնամյա և 2-րդ աստիճանի դպրոցների համար: (Տախտակը տես եջ 58):

4. Գրասեղանները դասարանում, յեթե հնարանը վորություն կա, պետք ե շարել յերեք շարքով, ամեն մի շարք մյուսից հեռու պետք ե լինի առնվազը $\frac{3}{4}$ մետր, սեղանները կողքի պատերից հեռու պետք ե լինեն առնվազը $\frac{3}{4}$ մետր, իսկ յետեկի պատից գոնե կես մետր: Սեղանների առջևը բացվելու յե մի աղատ տարածություն, վորն ունենալու յե առնվազն $2\frac{1}{2}$ մետր բարձրություն, վորն ունենալու յե առնվազն մի մետր լայնք. այդտեղ են տեղավորվելու ուսուցչական գրասեղանը, գրատախտակը և պահարանը կամ պահարանները:

ՊՐԻՋ. ԵՐԻՄՄԱՆԻ ՉԱՄԱՐՎՈՒՅՔ

	1	2	3	4	5	6	7
ի՞նչ հասակի յէ հարմալ (սահմալ)	100-	111-	121-	131-	141-	151-	161-
Սեղանի ստովն մտով բարձրություննը հա-	-110	-120	-130	-140	-150	-160	-170
սանից. .	55	60	66	71	77	82.	87
Սեղանի եռակի (աշակ. կողմ դարձած) մասի	46	50	56	60	66	71	76
բարձրությունը հաստակեց.	46	50	56	60	66	71	76
նստելու տեղի վերին մասի բարձրությի բարձր.	28	31	35	38	42	45	48
հասակից.	27	29	31	33	34.5	36	37.5
թիլունքի վերին թեք մասի բարձր. հստելու	18	19	20	22	23	24	27
տեղից.	18	19	20	22	23	24	27
թիլունքի ուղաճախաց մասի հետալորությունը	18	19	21	22	24	26	28
սեղանի՝ աշակ. գործը դարձած յիշելոց	21	22	23	25	26	27.5	30
(թիլունքի դաստիարակում).	55	55	55	60	60	60	60
Սեղանի աշակ. կողմը դարձած յիլունի նստելու	46	45	45	50	50	50	50
անդի հասովորությունը (դիֆֆերենցիալ)	Անդի	անդ	3 կամ	4 սահ.	անդ-	ան-	
Դիմունից.							
Նստականի (նստելու անդ) լայնքը.							
Սեղանի յերեանքը (մեկի համար).							
նստելու անդի իդրիալիքը (մեկի համար).							

Բ. Գրաս սիսակ

Ամեն մի դասարան պետք ե ունենա առնվազը մեկ մեծ գրատախտակ, անհրաժեշտության գեպքում մի դասարանի պիտի տրվի յերկու գրատախտակ: Ցանկալի յե Ա. խմբակի դասարանի յերեք պատերի յերկայնքով, վորոշ բարձրությամբ և լայնությամբ պատի գրատախտակներ կամ միացյալ մի գրատախտակ շինել տաւ, վորպեսզի աշակերտները խմբովին նկարչական և գրավոր զանազան աշխատանքներ կատարեն այդ գրատախտակների վրա: Սովորաբար գրատախտակը պետք ե դրվի աշակերտների դիմացի պատի մեջտեղի լուսավոր տարածության վրա կամ պետք ե ամբացվի այդ պատին այնպիսի բարձրությամբ, վոր բոլոր աշակերտներն առանց խանդարվելու տեսներ կարողանան գրատախտակի վրա գրածները կամ նկարածները:

Գրատախտակի յերեսը պետք ե ներկվի համաչափ, մաքուր, մուգ, մատ և վոչ փայլող սև գույնով. մակերեսությը պետք ե շատ հարթ լինի և այնպիսի նյութից, վոր վրան գրվածը հեշտությամբ ջնջվի:

Ավելի ցանկալի յե շարժական այնպիսի գրատախտակը, վորը տեղից-տեղ տեղափոխելու համար մեծ դժվարություն չի ներկայացնում. շարժական գրատախտակը լուսի պահանջների տեսակետից կարելի յե հարմար տեղ տեղափոխել յերեսը ըրջել, դիտողին մոտեցնել կամ հեռացնել:

Գույն տված փայտյա տախտակի փոխարեն կարելի յե գործ ածել լինուել, վորն ամբացվում ե պատին կամ համապատասխան տախտակների վրա. նրա գույնը չի փայլում, և վրան գրվում ե ավելի փափուկ և հեշտ:

Գրատախոտակը կավճի, սպռնջի կամ ջնջոցի համար տեղ պետք ե ունենա. կավճը պետք ելինի մաքուր սպիտակ, փափուկ, հեշտությամբ գրող (սպիտակությունը գրատախոտակի վրա թողնող). կավճը պետք ե գործածել թղթի մեջ փաթաթած: Զնջոցը միշտ խոնալ պետք ե պահել և դասերից հետո հիմնովին լվանաւ վորպեսզի մաքրվի ցանկալի չափով:

Գ. Թուղթ յեզ ռեբ

Դպրոցում գործածվող թուղթը, ինչպես և տետրի թուղթը, պետք ե ունենա սպիտակ կամ սպիտակ գեղնավուն գույն, հարթ և մաղերից աղատ մակերևույթ և թանաք չձձող, ավելի փափկավուն, ձկուն, քան չոր վորակ:

Տետրն իր արտաքինով և ներքինով պետք ե բավարարի գեղարվեստական, իսկ իր մեծությամբ և տողերի հեռավորությամբ մանկավարժական պահանջներին: Տետրի բարձրությունը չպետք ե 20 կամ 22 սանտիմետրից մեծ լինի, լայնքը լուսանցքի հետ միասին հավասար պիտի լինի 14-15 սանտիմետրի: Տողերի յերկայնքը (գրելու համար նշանակված տարածությունը) 11 սանտիմետրից ավելի չպետք ե լինի: Յեթև հիշյալ հարաբերությունները չեն պահպանված, և չափերն ավելի մեծ են, այն գեպքում տողերի քանակը շատ ե լինում և յերկայնքը մեծ, այնպես վորմի ամբողջ յերես գրելու համար աշակերտը մեծ չափի եներդիա և ժամանակ ե վատնում և այդ պատճառով իլ աշխատանքից ավելի շուտ ձանձրանում: Յերկար տողերով տետրի վրա գրելիս աշակերտը կամ պետք ե

շուտ-շուտ տետրի տեղը փոխի և կամ գրելիս մարմարին անցանկալի գիրք տա:

Նշանակություն ունի նաև տողերի իրարից ունեցած հեռավորությունը. Ա. և Բ. խմբակի տետրերի տողերը սովորական տետրի տողերից շատ ավելի իրարից հեռու պետք ե լինեն, վարովինուն այդ խմբակ-ներում աշակերտները մեծ-մեծ են գրում: Ա. և Բ. խմբակի տետրերի տողերն իրարից հեռու պետք ե լինեն 8 մմ, հաջորդ խմբակներում աստիճանաբար գործածության մեջ են մտնելու յերեք տեսակի տետրեր, վորոնց տողերն իրարից հեռու յեն լինելու 6,4 մմ, 4,9 մմ և 3,9 մմ.

Դ. Թանաք, գրիչ, գրչածայր

1. Թանաք: Թանաքը պետք ե մութ-սև գույն ունենա, գույնը չձգի, միատեսակ և մաքուր խառնուրդից լինի, վար հեշտությամբ հոսի գրչածայրից:

2. Գրիչ: Ցանկալի չեն ապակուց և մետաղից շինուածքը գրիչները. գրիչը կարելի յեւ շինել փայտից, ված գրիչները. գրիչը կամ թղթի նյութից: Գրչի հաստությունը խցանից կամ թղթի նյութից: Գրչի հաստությունը չափական կամ աշակերտի ձեռքի զարպետք և համապատասխանի աշակերտի ձեռքի զարպետք կացման:

3. Գրչածայր: Գրչածայրը մեծապես ազգում է ձեռագրի վրա. շատ անգամ միենույն մարդը լավ կամ վատ և գրում այս կամ այն գրչածայրի պատճառով. վատ ե գրում այս կամ այն գրչածայրի պատճառով. միենույն գրչածայրով չեն կարող տարրեր անհատներ հաջողությամբ գրել: Ամեն մի անհատի անառույն հաշողությամբ գրել: Ամեն մի անհատի անառույն հաշողությամբ առաջնահատկությանը տողիական և բնախոսական առանձնահատկությանը առաջնահատկությանը մի գորոշ տեսակի գրչածայր, համապատասխանում և մի գորոշ տեսակի գրչածայր, համապատասխանում գրչածայրով մարդ գրում ուստի և համապատասխան գրչածայրով մարդ գրում

և ավելի գեղեցիկ, արագ և եներգիայի քիչ ծախտով:
ինչպես մեծերը գրչածայրը փոփոխելով վերջապես
գտնում են իրենց հարմար գրչածայր, այնպես և հենց
Ա. խմբակից աշակերտին պետք է փորձել տալ և՛ շատ
սուր, և՛ սուր, և՛ կես բութ, և՛ բութ ծայրով գրչա-
ծայրեր, վորից հետո միայն պետք է վորոշել, թե վոր
տեսակի գրչածայրով և լավ գրում այս կամ այն աշա-
կերտը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. П. О. Афанасьев. Методика родного языка. 1924 г.
2. П. О. Афанасьев. Краткая методика родного языка. 1926 г.
3. Методич. письмо Научно-методической Секции Соцвоса МОНО: Технические навыки письма, чтения и счета в трудовой школе 1 ступени. 1926 г.
4. И. П. Плотников. Родной язык в комплексе. 1925 г.
5. А. В. Попов. Методика русского языка. 1915 г.
6. Н. Кульман. " " "
- 1914 г.
7. Тросников. Обучение письму. 1914 г.
8. В. С. Гербач. Метод. руководство к обучению письму. 1910 г.
9. Под. ред. А. В. Молькова. Здание труд. школы 1 ступени. выпуск II. 1923 г.
10. E. Sack. Der Schreibunterricht. 1910 *թ.*
11. E. Meimann. Experimentelle Pädagogik. 1913 *թ.*
12. G. Schneider. Schulgesundheitslehre. 1916 *թ.*
13. L. Burgerstein. Schulhygiene. 1910 *թ.*
14. Fr. Vogt. Indiv. u. schöpferischer Schreibunterricht. 1922 *թ.*
15. L. Sütterlin. Neuer Leitfaden für den Schreibunterricht. 1924 *թ.*
16. G. A. Scheider. Besondere Unterrichtslehre. 1926 *թ.*
17. Գ. Եղիսաբետ Հայոց լեզվի մեթոդիկա. 1923 *թ.*



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

1. Գրության նպատակը	3
2. Գրության գործողության վերլուծությունը	6
3. Մեթոդական պահանջներ	12
4. Գրության պարագաներ	49
5. Գրականություն	63

«Ազգային գրադարան



NL0223748

57. 157



ԳԻՒԾ 50 4.

1
2